Բառային կազմը, լինի գրական լեզվի թե բարբառի, գտնվում է անընդհատ շարժան, փոփոխության մեջ: Բառային կազմից դուրս են ընկնում ռասանձին բառեր, ավելանում են նորերը, կատարվում են նոր փոխառութիւններ, շատ բառեր իմաստափոխվում են և այլն: Այս տեսակետից Ալեշկերտի խոսվածքի բառային կազմը բացատրելու շի կազմում: Այժմյան վիճակով ինչպիսի՞ տեղաշարժեր են կատարվել խոսվածքի բառային կազմում:

1. Բառային կազմից դուրս են եկել բազմաթիվ բառեր, այդ թվում՝ ա) կրօնական հասկացութիւններ՝ արտահայտող բառեր: վեղար, փրիտ, պաղարակ, պրսպիկ, ր'ուրվուտ, ժամկոծ, ժամհար, օղորյա տեր, տիրածու, օրէնկել, ծոմ, միաժում, նարոզ, խանհամբուր, և այլն: բ) Հին հասարակարգին և վարչակարգին վերաբերող բառեր. պրիտավ, բոթիվա, գարազաօ, ուռյաղնիգ, պարան, սօզգի (տալ), գ'ըրիբ, բուս, պրիտ, գրլավի, օղորմած տէր և այլն: գ) Գյուղատնտեսական աշխատանքի տեսակների, գործիքների և նրանց մասերի անուններ՝ կազմված մեքենայացման պատճառով դրանց դուրս մղվելու հետ. մանգիտ, հ'ամօլի, ծիրի, օղնի, մալուխ, ճ'ըկար, խառչան, կանպիճ, առնուզ, կրլազ, հավուզ, էրնել, թէղու, Թ, բ, գ ենթակետերում նշված և դրանց կարգի բառերից մի բանիւր կարող են գործածվել շատ քիչ զնպերում՝ միայն, այն էլ ձերտնիների կողմից, իսկ նման գործածութիւնները խիստ հնարանութիւններ են:

դ) Փոխառյալ բառեր, առանձնապէս թուրքերեն բառեր, որոնք փոխարինվել են հայերեն կամ ուսուներեն բառերով: Հայտնի է, որ Արեւմտյան

⁵ Տրվում են նաև գրական հայերենի միջոցով փոխառված բառերը:

Հայաստանում սեղադրված բարբառները իրենց բառային կազմում ունեն հազարների հասնող թուրքերեն բառեր: Նախկինում որքա՞ն է եղել թուրքերեն բառերի թիվը Արաշկերտի խաղվածքում: Անկասկած մի քանի անգամ ավելի շատ, քան այժմ է, բայց ստույգ սակ ճշարտվոր չէ, քանի որ չկան համապատասխան աղբյուրներ նման հաշվարկում կատարելու համար: Այժմյան վիճակով այդ բառերի թիվը չի անցնում հարյուրից, որոնց մի մասն էլ արդեն սկսում է մոռացվել, հազվագույ զորածուծություն ունի կամ շոշափիկի արժեք չունի բառապաշարի մեջ:

Պետական-պաշտոնական, վարչախառնարչական և զինվորական ոչ մի բառ գրեթե չի պահպանվել, որովհետև ընդամենը բազմաթիվ են արևմտյան բարբառներում և պետք է որ եղած լինեին նաև Արաշկերտի խաղվածքում, ինչպես. մազին, դայմազամ, միրալայ, դադի, էֆենդի, էսնաֆ, զապֆիա, մեմուր, Նյուրիթ և այլն:

Չեն պահպանվել նաև արճեստ, արճեստավոր նշանակող բառերը. սեմեբջի, դաֆաջի, բամաջի, թաղաի, դույումչի, դամուրչի և այլն:

2. Բառային կազմի համարում նոր բառերով, բառ որում՝

ա) նորագույն փոխառություններ գրական հայերենից և առևերենից, որոնց թիվը մի քանի անգամ ավելի է հին փոխառություններից: Նորագույն փոխառությունները կարևոր նշանակություն ունեն բառապաշարի մեջ, նրանք արտահայտում են այնպիսի հասկացություններ, երևույթներ, առարկաներ և այլն, որոնք հատուկ են հասարակական նոր հարաբերություններին, գիտության, տեխնիկայի, արվեստի զարգացմանը. գյուղատնտեսություն, գյուղատնտեսություն, արվեստ, մեկէնա, մաշինա, շարկացան, թատրոն, կինո, համերկ և այլն, և այլն:

Ժամանակակից գրական հայերենի լավագույնումը սկսել են գործածվել դասական թվականներ. շորթոր բրբղազ, հինգերթոր սղազ, վեճերթոր դասարան, յոսերթոր խումպ և այլն:

բ) Փոխառյալ բառերի փոխարինում հայերեն բառերով. նաֆասաշուն, փանջարա-լուսամուտ, շաղը-բարձրակի, թալվա-գ՛ում, քըլա-կիր, ջուար-պալախան, փէշկէշ-նըվեր, սյան-հայդրին, նաֆաթ-անծ, սը-հատ-ժամացույժ, վատան-հայրէնիկ, մալլա-թաղ, միտամ-իպըր և այլն: Այս երևույթը գնալով ավելի է տարածվում:

Քորերենն և այլ լեզուների որոշ բառերի փոխարեն սկսել են գործածվել ռուսերեն բառեր ևս:

գ) Նորակազմ բարբառային բառեր, որոնց ստեղծումը թելադրվում է նոր կյանքի ու կենցաղի, անտեսության զարգացման և այլ պահանջներին:

կենկույ: Այսպիսի բառեր կարող են կազմվել հայերեն կամ փոխառյալ արմատներով. աներգլուտկ սանտեսանելի, լերևացող, կըրիշել, մէտրանոծ, կապէկանոծ, աֆէրիստուտեն, թամբալուտեն, խանուտե՛ի, կրասկել, պոլել, վահսել, կաստումավոր, լըզրաշապ և այլն:

3. Բառերի իմաստափոխություն. բարբ փոխում է իր նախկին իմաստը և ստանում է նոր իմաստ, կամ նոր իմաստով գործածվելով հանգրծ՝ պահպանում է նաև նախկինը: Իմաստափոխված բառեր շատ կան: Հիշատակենք մի երկու օրինակ. օղաթ-օղ նշանակության հետ այժմ ունի նաև «աշխատավորների մի խումբ» (կոլանտեսության օղակ), «պիտեբրական կազմակերպության մի ստորաբաժանում» (պիտեբրական օղակ) նշանակությունները:

Պարբերի—օգործով զբաղվել, ավելի շատ՝ օգուսեր պատարասել. նախկին՝ «աշխատանքը վերացնել, անգործ լինել» իմաստներով հազվագույ է գործածվում:

Խորտուր—սպետական իշխանության օրգան. նախկին նշանակությամբ գործածական չէ:

Բառային կազմում կատարված այս փոփոխություններից զերծ չի մնացել նաև բառային հիմնական ֆունդը, նրա մեջ էլ տեղի են ունեցել որոշ փոփոխություններ: Բառային կազմից զուրս ընկած բառերի մի մասը ժամանակին ունեցել է ամենօրյա գործածություն և մտել է բառային հիմնական ֆունդի մեջ (առանձնապես կրոնական բառեր և հին դրուշաստեսությունը վերաբերող բառերը): Նշանակում է՝ բառային հիմնական ֆունդը զրկվել է մի շարք բառերից: Մյուս կողմից, բառային հիմնական ֆունդի մեջ են մտել բազմաթիվ նոր բառեր, ինչպես. աշխօր, օղագավար, պրլան, լապշա, մազաթոն, հէախօս, հէախօս, Տողատա, առդջօ, սերմ-ֆոնդ, զրագորան, ադուպ, առտել, աֆաթորուզ, Բոնզ, մարկ և այլն, և այլն: Հիմնական բառաֆոնդի առանձին բառեր ևս կարող են իմաստափոխվել:

Չնայած այսպիսի փոփոխություններին, բառային հիմնական ֆունդը պահպանել է իր ամբողջականությունը, ոչ թե ենթարկվել է արմատական վերափոխության, այլ՝ որոշ վերանորոգման, ավելի շատ բառեր է ընդունել իր մեջ, քան թե կորցրել է, որի շնորհիվ ավելի է հարստացել և համապատասխանել ժամանակակից կյանքի և հարողակցման պահանջներին:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ՀՈԳՆԱԿԱՆՈՑՈՒՄ

Այաշկերտի խոսվածքում գոյականների հոգնակի թիվը կազմում է կզակի թվի վրա կ. դիկ. իկ. դան, վրդան, տան, բան, ան, վան, ներ, եր մասնիկների ավելացումով:

Միաժանկ բառերը հոգնակի են դառնում եր մասնիկն ստանալով. հող-հողեր, տուն-տուներ, պաղ-պաղոթ, քար-քարեր, ծառ-ծառեր, հավ-հավեր, կալ-կալեր, կամ-կամեր, գ'անձ-գ'անձեր, Եր մասնիկն ստանում են նաև այն միաժանկ բառերը, որոնց զբարբարյան է հոգնակիակերտ մասնիկը շի գիտակցվում և ունի անանցի արժեք. անձ-անձեր, շարկ-շարկեր, միտկ-մրտկեր: Միաժանկ բառերից բլեքը կարող են հոգնակի դառնալ այլ մասնիկներով: Այդ մասին ստորև:

Մեկ և կես վանկ ունեցող բառերը ևս հոգնակիանում են եր մասնիկով. վազըր-վազրեր, մեղրը-մեղրեր, սառըխ-ասախներ և այլն:

Բազմաձայն բառերի հոգնակին կազմվում է նեմ մասնիկով. դ'բբոժ-դ'բբոժներ, աշագեղ-աշագեղներ, կոյխոզ-կոյխոզներ, գ'անագ-գ'անագրներ, պախս-պախսներ, աղուն-աղուններ:

Նեմ մասնիկն են ստանում գինդ-գ'ընդըներ, գ'ունդ-գ'ընդըներ, լինդ-լինդներ, թումր-թըմրներ, լում-լըմներ միաձայնկ բառերը: Առաջին երկու բառը հոգնակի թվում նույնանում են, որովհետև մեկի ի և մյուսի **ու** ձայնավորները հավասարապես հնչյունափոխվում են ը-ի:

Գրաբարում բառավերջում և ունեցող և այդ ե-ն խոսվածքում կորցրած միաձայնկ բառերը հոգնակի թվում վերստանում են և ձայնորդը: Այդ բառերից են. ճեռ-ճեններ, զող-զողներ, հոտս-հոտսներ, գ'առ-գ'առներ, մուզ-մըքներ, ճուզ-ճըքներ, մայ-մաղներ և այլն:

Ա. ձայնավորով վերջացող բազմաձայնկ բառերը և ի ձայնավորով վերջացողների մի մասը հոգնակին կազմում են կ-ով, ազա-ազուկ,

արդա-արդէկ, աղա-աղէկ, ճամպա-ճամպէկ, գ'ատա-գ'ատէկ, դրան-դրանէկ, բանօկի-բանօկիկ, հօկի-հօկիկ, գ'արի-գ'արիկ:

Կ-ով են հոգնակի կազմում նաև որևէ տեղացի լինելը ցույց տվող բառերը. արարանծի-արարանծիկ, ալաշկէղծի-ալաշկէղծիկ, հէրէվընծի-հէրէվընծիկ, վանէծի-վանէծիկ, գ'եղածի-գ'եղածիկ և այլն:

Վերջին եղում միաձայնկ արմատ ունեցող բարդ բառերի հոգնակիացումը կատարվում է արդի գրական հայերենի ձևով. եթե հիշյալ միաձայնկ արմատը ինչ-որ շափով պահում է իր իմաստային անկախությունը, հոգնակին կազմվում է եր մասնիկով, իսկ եթե չի պահում՝ ներ մասնիկով. ճ'աղուն-ճ'աղուններ, խճճար-խճճարներ, կալառեղ-կալառեղներ, շրնմազ-շրնմազներ, բայց՝ ջբբհար-ջբբհարներ, շոտան-շոտաններ:

Իկ մասնիկը ափխանում է միայն մի բառի վրա. մառս-մառտիկ: Գիկ (տիկ) մասնիկով հոգնակիանում են բարեկամություն, ազգակցություն ցույց տվող բառերը. քաղըր-քաղըրդի, սանըր-սանըրդի, սանա-սանաձըրդի, հօխպըր-հօխպըրդի և այլն: Այս կարգի բառերից մի բանիսք եր, ներ մասնիկներով են հոգնակիանում. հէր-հէրեր, մէր-մէրեր, պարէ-պարէներ, ջ'օժօ-ջ'օժօներ և այլն: Սրանցից բացի, Գիկ մասնիկն է ստանում նաև հ'ընդեր-հ'ընդըրդի բառը:

Սառն մասնիկով հոգնակիացող է գ'էդին-գ'էդըտան բառը:

Գան (տան) մասնիկով հոգնակիացող են. գ'ըրխ-գ'ըրխըրան, գ'օ-մէշ-գ'օմէշտան: Երբ դան մասնիկը հաջորդում է խուլ բաղաձայնի, նրա դ-ն վերածվում է ա-ի և սաացվում է աան:

Վըլան մասնիկը գրվում է մի երկու բառի վրա. ծըր-ծիրվըրան, քուր-քուրվըրան (ունի նաև՝ քուրվըրդիկ), տըր-տիրվըրան:

Ան մասնիկը ստանում են գ'էլ-գ'իլան, ճ'ի-ճ'իան բառերը:

Վան մասնիկը ստանում են էձ-իձան, էշ-իշան, գէժ-գիժան, ճէղ-ճիղան բառերը:

Տան մասնիկով ևս քիչ թվով բառեր են հոգնակիանում. փէջ-փիջրան, գ'էղ-գ'իջրան, գ'եղ-գ'իջրան, կող-կողրան, ճուղ-ճըղրան (նաև՝ ճըղեր), տեղ-տեղան: Վերջին բառը հոգնակի թվում կորցնում է ղ բաղաձայնը: Սա բացառիկ երևույթ է:

Հոգնակի թիվ կազմող հիմնական մասնիկներն են եր, ներ, կ. մյուսները զրվում են միայն մի բանի, նույնիսկ մեկ բառի վրա:

Եր և ներ մասնիկները սխել են գույս մղել մյուսներին. սրանք կարող են զրվել բոլոր հոգնակիացնող մասնիկների փոխարեն, բացի կ-ից,

կեր վերջինս գրվում է ա ձայնավորով վերջացող բառերի վրա (մասա բառը եր կամ ներ չի ստանում. նրա հոգնակին ունի միայն մաստիկ ձևը): Այսպես՝ գ՛եղ-գ՛եղբրան, գ՛եղեր, կող-կողբան, կողեր, գ՛ըլթ-գ՛ըլթբրան, գ՛ըլխներ, էձ-իձվան, էձեր, քախկըծի-քախկըծիկ, քախկըծիներ, քալորթ-քալորդիկ, քալորներ և այլն:

Հենց այս պատճառով է, որ բազմամիով դրականներ հոգնակիանում են մեկից ավելի ձևերով:

Նորագույն փոխառություններ հիմնականում ստանում են եր, ներ հոգնակիակերտ մասնիկներով. պոլ-պոլեր, շտիկ-շտիկեր, բանգ-բանկեր, կոլիտղ-կոլիտղներ, սաղարտ-սաղարտներ և այլն:

Ա. ի ձայնավորներով վերջացող բառերը ստանում են կ. բանգաբանգիկ, կաղարտա-կաղարմէկ, կուխնի-կուխնիկ, միլիծի-միլիծիկ, շուկի-շուկիկ:

Կան բառեր, որոնք կարող են կրկնակի մասնիկ ստանալ. տղա-տղէկ-տղեղներ, ճամպա-ճամպէկ-ճամպկներ, դէվա-դէվէկ-դէվէկներ, ճի-ճիան-ճիաներ և այլն: Մտանք հատկապես այն բառերն են, որոնք վերջանում են ա, ի ձայնավորներով և հոգնակիանում են կ մասնիկով: Երևում է, որ այս կ-ի նշանակությունը, որպես հոգնակիացնող մասնիկի, սկսում է միազնի, որը և պատճառ է դառնում բառի վրա այլ մասնիկ գրվելու: Իսկ կ-ի հոգնակիացնող իմաստի միազնումը կարող է հնչատությունը տեղի ունենալ նմանեցնելով արդեն ածանցի վերածված այն կ-ին, որ կա բազմամիով բառերի վերջում, ինչպես՝ անկ, ունկ, միտկ, գիրկ, գիրկ և այլն:

Քեք հոլովներում բոլոր բառերի հոգնակի թվի վրա ավելանում է եր կամ ներ. իձվան-իձվաներու, իձվանէրած, իձվանէրած, գ՛ըլթբրան-գ՛ըլթբրանէրու, գ՛ըլթբրանէրած, գ՛ըլթբրանէրած: Տատանումներ են աւելու կ և դիկ մասնիկներով հոգնակիացած բառերը: Կ-ն թեք հոլովներում կարող է փոխարինվել եր, ներ-ով. վանէժի, վանէժիներու, վանէժիներու, վանէժիներով, կարող է մնալ եր, ներ երկրորդ մասնիկն աւանդաւ. գ՛ատէկ, գ՛ատէկներու, գ՛ատէկներու, գ՛ատէկներով:

Վիկ մասնիկը կարող է պահպանվել իրենից հետո ավելացող եր, ներ մասնիկների հետ. կընզրտիկ, կընզրտիկներու, կընզրտիկներու, կընզրտիկներով, կարող է դուրս բնկնել. սանամբրդիկ, սանամբրդներու, սանամբրդներու, սանամբրդերով:

Երբեմն էլ կ և դիկ մասնիկներն ունեցողների վրա նոր հոգնակիա-

կերտը չի ավելանում, քալորդիկ, քալորդոծ, քալորդոծիծ, քալորդոծով-տրնէժիկ, տրնէժոծ, տրնէժոծիծ, տրնէժոծով:

Մի խումբ գոյականներ չեն գործածում հոգնակի թվով: Գրանցից կարելի է նշել հետևյալները. կեր, քրդդիկ, սեր, սէր, ժքմեխ, կորոն, բուրբ ճաշերի անունները՝ արուր, շուրվա, քրճիկ, կոնջոլ, կըլթիկ և այլն:

Հավաքական իմաստ արտահայտելու համար գործածվում է ներ մասնիկը. Մուկէներ, երզոներ, Դիլթներ, Գ՛օօներ և այլն:

Այս և նման կազմությունները հոգնակի թվի հետ չպիտի շփոթել: Մուկէներ, օրինակ, չի նշանակում երկու կամ ավելի Մուկէ անուն ունեցող անձնավորություն, այլ նշանակում է Մուկէի ազգությունը, այդ ազգությանը պատկանողները:

Նն՛, ոն՛, ան՛ կ մասնիկները, որոնք հատուկ են արդի գրական լեզվին և մի շարք բարբառների, չկան Ալաշկերտի խոսվածքում:

Հոգնակիացման մասնակ սեղի են ունենում ձայնավորների գաճազան հնչյունափոխություններ, որոնց արդեն անդրադարձել ենք «Հընչյունաբանություն» բաժնում:

ՀՈՒՍԿԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՏ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ալաշկերտի խոսվածքն ունի շուր հոլով: Գրանք են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական ներկայական հոլովը, ինչպես «կը» ճյուղի բոլոր բարբառներում, այստեղ ևս կարծում է նկարագրական ձևով ներգոյականի իմաստն արտահայտվում է անորոշ տրականով և ԱՆ «մէք» կազով. տան մէճ, աղդի մէճ, ջըրի մէճ, հողի մէճ և այլն, ինչպես և ուղղականով այն դեպքում, երբ ներգոյականի իմաստը գրական հայերենում տրվում է տրականով. նստե տուն գիրկ կը կատատանը նստած գիրք է կարգում: Բացակայում են սեական և հայցական հոլովները, որոնցից առաջինը նույնացել է տրականի հետ, իսկ երկրորդը՝ ուղղականի:

Ուղղական հոլովը գոյականի, նաև հոլովոլոր բոլոր բառերի ուղիղ, անփոփոխ ձևն է: Ուղղականը վերջավորություն չունի, կամ, ինչպես բնորոշված է սակ, ունի զրո վերջավորություն:

Տրական հոլովը կազմված է ուղղականից՝ հոլովիչների ավելացման ճանապարհով: Վերջադրական հոլովման դեպքում հոլովիչները կարող են բնորոշվել որպես տրական վերջավորություններ, բայց այդ էլ տրականը կունենա ի, ու, ա, ան, վա, ոն վերջավորությունները:

Քացառականը կազմվում է ուղղական հոլովից ի, ու, ան, ա հոլովումների և արականից՝ օ, վա, ոն հոլովումների զեպրում: Քացառականի վերջավորություններն են՝ է, էն, նէ, իծ, ուծ, ա, ած, ըստ որում իծ վերջավորությունը նորամտություն է, որի գործածությունը կազմում է այլ բարբառների և գրական հայերենի ազդեցության հետ և անբըհաստ բնորոշակվում է՝ եզակի թվում ցուցարեղևով մյուս վերջավորություններին փոխարինելու ակնհայտ բնորոշակություն:

Գործիականը կազմվում է ուղղական հոլովից: Միայն օ, մասամբ նաև աև հոլովման բառերի գործիական է կազմվում արականից, ինչպես. հէր-հօր, հօրով: Ան հոլովման բառեր գործիականում ունեն զուգահեռ ձևեր՝ կազմված ուղղականից և արականից. տէր-տիրով, տիրօծով: Գերակշռությունը ուղղականից կազմված ձևերին է պատկանում: Թեք հոլովները հոգնակի թվում կազմվում են հոգնակի ուղղականից հետևյալ կերպ. արականը՝ ու հոլովիչ-վերջավորությունով, բացառականը՝ էն, իծ, ուծ վերջավորություններով, գործիականը՝ օվ վերջավորությամբ:

Քացառություն են կազմում կ, դիկ մասնիկներով հոգնակի կազմող բառերը, որոնց արականը ունենում է ու վերջավորություն: Այս դեպքում բացառական և գործիական հոլովները կազմվում են հոգնակի արականից:

ՀՈՒՈՎՈՒՄՆԵՐ

Անշվերտի խոսվածքն ունի ութ հոլովում՝ ի, ու, ա, ան, վա, օ, ան, դարբարականը՝ եզակի թվի համար, ու, ու՝ հոգնակի թվի համար:

Հոլովումը, ըստ հոլովիչների տեղադրման, ունի երկու բնույթ՝ ներդրական և վերջադրական: Վերջադրական հոլովման ժամանակ հոլովիչն աղելանում է բառի վերջում: Վերջադրական հոլովումը դերիչ-խոսքն ու հիմնականն է խոսվածքում: ներդրական հոլովման դեպքում հոլովիչը ձայնավորը գրվում է բառի մեջ, որի հետևանքով տեղի են ունենում բառերի արմատական ձայնավորների փոփոխություններ:

Եթե հոլովումը եզակի թվում բազմազանություններ և բավականաչափ անկաշունտություններ ունի, որ կտեսնենք հետո, ապա հոգնակի թվում հասել է միօրինակության, դրեթև անբաժան տիրապետություն

1 Անդրական և վերջադրական տերմինները պատկանում են պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանին:

տարով ու հոլովիչին: Տրական հոլովում ու հոլովիչը հանդես է գալիս սակավաթիվ բառերում, իսկ այդ բառերը կարող են հոլովվել նաև ու հոլովիչով:

Ի հոլովում

Ի հոլովման բառերը եզակի արականում ստանում են ի հոլովիչը, հոգնակի արականում՝ ու: Եզակի բացառականն ունի էն կամ իծ, հոգնակին՝ ուծ, էն վերջավորությունները, գործիականը՝ օվ: Ի հոլովումը միշտ վերջադրական բնույթի է:

Ի հոլովման ենթարկվում են՝

ա) ու ձայնավորով վերջացող գոյականների մի մասը. լու-լրվի, ճու-ճըվի, հատու-հատի, ճրբակու-ճրբակուի և այլն, որոնց բառավորքի ու ձայնավորքի ի հոլովիչից առաջ դասնում է վ: ձեակու բառում նման փոփոխության չի ենթարկվում ու ձայնավորքը:

բ) Բոլոր անձնանունները. Արուս-Արուսի, Շօղիգ-Շօղիգի, Պօղոս-Պօղոսի, Պէղրոս-Պէղրոսի, Զօվանէս-Զօվանէսի և այլն:

Անձնանունների ի հոլովիչը ձայնավորների մոտ դասնում է յ: Գէլօ-Գէլօյ, Կարօ-Կարօյ, Մարօ-Մարօյ, Ալօ-Ալօյ, Պօրօ-Պօրօյ, Պէղէ-Պէղէյ և այլն: Պատճառը հավանաբար այն է, որ շեշտը մնում է արմատական ձայնավորի վրա, չի անցնում ի հոլովիչին և վերջինս թույլ է արտասանվում ու փոխարկվում է յ-ի: Որպես հասկացուցիչ գործածվող այս բառերի յ-ն ընկնում է. Վանօ տրակտօր վար կէնա, Լամօ աֆտօն սերմ կը կրաւ:

գ) Ուսնէ, իկ, ագ, անկ, ածու, արան, ին, ոտտ, վար, ու ձայնակներով վերջավորվող բառերը. պէղուսնէ-պէղուսնէի, հընգըրուտնէ-հընգըրուտնէի, լավուտնէ-լավուտնէի, մէձուտնէ-մէձուտնէի, դընուագ-դընուգի, սօղնագ-սօղնգի, ուղէլի-ուղէլիկի, սրուպանկ-սրուպանկի, սէրմածու-սրմածուի, ճաշարան-ճաշարանի, ձէլիճ-ձէլիճի, գաղընոժ-գաղընոժի, ճամպոտ-ճամպոտի, քաղվոր-քաղվորի (բացառություն են կազմում մի քանի բառ):

դ) Ա ձայնավորով վերջացող բառերը. ազաւ-ազուի, թայլա-թայլի, գ'ատա-գատի, շուրվա-շուրվի, քէնա-քէնի: Այսպիսի բառերի հոլովման ժամանակ վերջահանգ ա ձայնավորը գուրս է ընկնում: Ա-ով վերջավորող բառերը բացառականում էն չեն կարող ստանալ, որովհետև դրանով կնուշանան որոշյալ ուղղականի հետ. գ'ատա-գ'ատէն, բացառա-

կան՝ զ՛ առէն, ուստի ստանում են ի՞նչ վերջավորութիւն՝ զ՛ առի՞ծ, ազո՞ծ, շուր՞վի՞ծ:

կ) Նորագույն փոխառութիւնները՝ կատարված ուսուցիչներից և արդի գրական հայերենից (բացի ի-ով և ում-ով վերջավորողների)։ մաշինա-մաշինի, կոլխոզ-կոլխոզի, տրակտոր-տրակտորի, զ՛ ասարան-զ՛ ասարանի, բրիգադիր-բրիգադիրի:

դ) Մարմնի մասերի անուններից հետևյալները. բիտ, բ՛լրան, մէճկ, անգաջ, մազ, ըզունգ, լինգ, սիդ, թոկ, սլոզիգ, աղիկ, դոշ, մաղ, վիկ, շօկ, բօզ, ազոս, լէզու:

է) Գոյականաբար գործածվող ածականները, թվականները, ենթակայական և հարակատար զերբայները. լազ-լազի, մէզ-մէզի, աշխարհ-աշխարհի, տեսուղ-տեսուղի:

ը) Ազգ, ժողովուրդ նշանակող բառերի մեծ մասը, թուրի-թուրիկի, պառիզ-պառիզի, արար-արարի, ազվան-ազվանի:

թ) Բազմաթիվ գոյականներ, որոնք ըստ վերջավորութիւնների, ածանցների և այլ հատկանիշների չեն խմբավորվում. քար, հող, սող, ջ՛ ուր, ամբ, ցան, տառտ, շրվալ, սրայից, թև, թև, զրնշի, փոզ, հըրօր, աման, կարաս, թառ, կուժ, կուրբը, սինձ, ցօրեն, խոզ, ծառ, սէլ, կանանձ (տրակ. կանձի) և այլն:

Ի հոլովման օրինակներ

կզակի	հոգնակի	կզակի	հոգնակի
ուղզ. հող	հօդեր	փէզ	փէզեր
տր. հողի	հօղէրու	փէզի	փէզերու
բաց. հօգնն.-իժ	հօղէրն.-աժ	փէզէն.-իժ	փէզէրն.-աժ
գործ. հօդով	հօղէրով	փէզով	փէզէրով

Ա հոլովում

Ա հոլովման բառերի տրականք ստանում է ա հոլովիչ թե՛ կզակի, թե՛ հոգնակի թվում: Բացառականի վերջավորութիւններն են ա, ուժ, էն, գործիականիներ՝ օվ: Ա հոլովումը վերջադրական բնույթ ունի:

Ա հոլովման ենթարկվում են՝

ա) Ա ձայնավորով վերջացող բառերից մի երկուսը. կազու-կազուու, բ՛ ու-բ՛ ըլուու:

բ) Ա ձայնավորով վերջացող մի բառ. ճամպա-ճամպուու:

գ) Ի ձայնավորով վերջացող բառերը, բացի ժամանակ ցույց տվող-

ներից, որոնք ենթարկվում են վա հոլովման: Օրինակներ՝ զ՛ արի-զ՛ արու, հօկի-հօկու, կաշի-կաշու, փօշի-փօշու, ջ՛ օրի-ջ՛ օրու: Այս և նման բառերի ի-ն թեր հոլովներում դուրս է քնկնում:

դ) Ճի, էժի, ամի, ծի ածանցներով վերջացող բառերը. սանկաճի-սանկաճու, զը՛օճի-զը՛օճու, զրտնաճի-զրտնաճու, կառպէժի-կառպէժու, Վ՛ լրէվըժի-Վ՛ լրէվըժու, գ՛ հաճի-գ՛ հաճու:

կ) Մարմնի մասերի անուններից երկուսը. զ՛ ըլօի-զ՛ ըլիու, փոբ-փօրու:

զ) Կենդանիների ու թռչունների անունները. զ՛ էլ-զ՛ լիու, աղվէս-աղվիսու, գ՛ առ-գ՛ առու, ուլ-ուլու, էժ-իժու, կօվ-կօվու, լոր-լօրու, ճընշուղ-ճընշրղու, սարէզ-սարգու և այլն:

Կան բացառութիւններ, ինչպես՝ յեզ, օճխար, վազբը, առլուձ, ցուրուր, շուս:

է) Չղադարավոր մի խումբ բառեր. մառս, ժամ, լուս, ճիժ, զ՛ ու, սուրպ, աստված, ծառ, քուն, ճ՛ քր, հօր, ծօլ, պտտալ, մոխի, ամօտ, համ, հօդ, յերգինկ, էտուժ, արեվ, բուսի և այլն: Ամիս, տարի, մուս, ջ՛ ուր, կարող բառերը թեև կարող են ստանալ ա հոլովիչ, բայց աճիկի շուս հօլովվում են այլ հոլովիչներով. տարի, ամիս՝ վա հոլովիչով, մուս՝ աճ հոլովիչով, կարօզ, ջ՛ ուր՝ ի հօլովիչով:

ը) Գոյականաբար գործածվող անորոշ դերբայը. զ՛ ալ-զ՛ ալու, տալ-տալու, աննիլ-աննիլու, էրտալ-էրտըլու, հասնիլ-հասնիլու և այլն:

թ) Բնական երևույթների անուններից հետևյալները. ցուռ-ցրողու, շոկ-շօկու, անձրեվ-անձրեվու, քամի-քամու:

ժ) Ի-ով վերջացող նորագույն փոխառութիւնները. դիվանի-դիվանու, միլիժի, մարօժի, պուզրի, սուխարի, դիլիչ, կուխնի և այլն:

ժա) Տեղանունները ենթարկվում են ա հոլովման, բայց պատահում է նրանց գործածութիւնը նաև ա հոլովիչով: Աբարան-Աբարանու, Ալազ-Ալազազու, Լենինազան-Լենինազանու, Թիլիզ-Թիլիզու, Քամրէզ-Քամրէզու և այլն:

Ազգ, ժողովուրդ նշանակող բառերի մի մասը՝ հայ-հայու, բոսու-բըբու, վըրածի-վըրածու:

Ա հոլովման օրինակ

	կզակի	հոգնակի
Ուղզ. ճ՛ի		ճ՛իան
Տր. ճ՛իու		ճ՛իանէրու

Բաց. ձիւով
Գործ. ձիով

Ճիւղներով, — էն
Ճիւղներով

Հոգնակի թվում ու հոլովման շնն ենթարկվում այն բաները, որոնք ունեն կ, ղիկ հոգնակիակերտ մասնիկները: Մրանց հոլովիչը կիւնի ոճ:

Ուղղ. սանկրդիկ
Տր. սանկրդոժ
Բաց. սանկրդոժէն, — իժ
Գործ. սանկրդոժով

Բայց նման բաները թեք հոլովներում ալիւի շատ գործածվում են եւ, նեւ մասնիկները կս ստանալուց հետո: Այս դեպքում արդեն ենթարկվում են ու հոլովման: Այսպես՝

	եզակի		
Ուղղ. սանկրդիկ	Ուղղ. սէր		
Տր. սանկրդիկներու	Տր. սիրու	հոգնակի	
Բաց. սանկրդիկներով	Բաց. սիրով	չունի	
Գործ. սանկրդիկներով	Գործ. սիրով		

Այս բանը պատկանում է ու- հոլովման և ունի կանոնավոր հոլովում:

Ա. հոլովում

Ա հոլովումն ունի ներդրական և վերջադրական բնույթ:

Ներդրական հոլովում

Ներդրական հոլովման դեպքում ա հոլովիչը զրգում է բառի ներսում, իսկ տվյալ բառի արմատական ձայնավորը զուրս է ընկնում: Այս ձևով ստանում ենք արական հոլովը: Բացառական հոլովը կազմվում է ուղղականից՝ էն կամ իժ վերջավորությունների կցուսով, գործիականը՝ դարձյալ ուղղականից և ունի օվ վերջավորություն:

Ա. հոլովման օրինակ

	եզակի	հոգնակի
Ուղղ. տուն		արներ
Տր. տան		արներու
Բաց. արնէն, — իժ		արներով, — էն
Գործ. արնով		արներով

Ա ներդրական հոլովման ենթարկվող բաների թիվը մեծ չէ:
ա) Մի բանի միավանկ բաներ, որոնց արմատական ձայնավորն է ու. տուն-տան, ձուն-ձան, շուն-շան, սուն-սան և այլն:

բ) Բաղմավանկներից անուն-անվան բառը:
Ներդրական հոլովման հետքեր պահպանվել են. մեխի-մէղած, տէկրը-տէկեր բաներում: Վերջինը միակ բանն է խոսվածքում, որ ունի է հոլովիչ:

Վերջադրական հոլովում

Ա վերջադրական հոլովման են պատկանում այն բաները, որոնք արականում ստանում են ա հոլովիչը:

Այս հոլովման բաների հոգնակի բացառականը ունի ուժ, էն վերջավորությունները: Գործիականը կազմվում է ուղղականից օվ մասնիկով:

Այս հոլովման են ենթարկվում՝

ա) Որպես բնականվար հասկացվող տեղանունները՝ գյուղ, բաղաք, շրջան, բացի ի-ով վերջացողների: Օրինակներ՝ Այաշկեղ-Այաշկեղոս, Աբարան-Աբարանա, Հ՛աշտարազ-Հ՛աշտարազա, Քունակ-Քունակա, Խոտս-Խոտսա, Կիրովագան-Կիրովագանա:

բ) Լեռների, գետերի անունները. Մասիս-Մասիսա, Այազյազ-Այազյազա, Շողանկատ-Շողանկատա, Աբազ-Աբազա, Աուպաշյա-Աուպաշյա և այլն:

գ) Ամիսների անունները. հունվար-հունվարա, փեղրբար-փեղրբարա, մարտ-մարտա, արբել-արբելա և այլն: Մախս, հունիս, հուլիս ամսանունները ենթարկվում են նաև ի հոլովման. մախս-մախսա և մախսի, հունիս-հունիսա և հունիսի, հուլիս-հուլիսա և հուլիսի:

դ) Երկրների անունները, որոնք ունեն ստան ածանցը. Հայաստան-Հայաստանա, Արաստան-Արաստանա, Ըոռաստան-Ըոռաստանա, Հրեզգաստան-Հրեզգաստանա և այլն:

Վերոհիշյալ կետերում բերված գոյականների բացառականը ձևով նման է տրականին. Ուղղ. Աբարան, Տր. Աբարանա, Բաց. Աբարանա: Այսպես է տեղանունների բացառականը նաև Վանի բարբառում՝

ե) Մի շարք այլ գոյականներ. Քունգի, արժիզ, կրնիզ, իրիզ, սա-նիզ, ալագան (վերջինը ենթարկվում է նաև ի հոլովման):

2 Հր. Անտոյան. Բնույթյան Վանի բարբառի, Երևան, 1953, էջ 116:

Հոլովման օրինակ

Եզակի

Տոգնակի

Ուղղ. թունդիր
Տր. թունդրա
Քաց. թունդրէն,—ած
Փործ. թունդրով

թունդրներ
թունդրներու
թունդրներուծ,—էն
թունդրներով

Աղբիկ բար ւս վերջադրական կանոնավոր Հոլովման է պատկանում: Այսպիսով բարբառիս հատուկ չէ աղբիկ և սէր բառերի՝ ժամանակակից գրական հանրեանում այլևս համարված Հոլովումը: Ահա այդ բառի Հոլովման պատկերը.

Եզակի

Տոգնակի

Ուղղ. ախճիգ
Տր. ախճրգա
Քաց. ախճրգած
Փործ. ախճրգով

ախճրգներ
ախճրգներու
ախճրգներուծ
ախճրգներով

Հոգնակի թիվ շունեն օ, բ, դ, զ կանոնում թվարկված բառերը: Հավարական, ընդհանրական իմաստ ևն արտահայտում Աբարաններ և տեղանունների նման հնարավոր կազմությունները և շեն ըմբռնվում որպես Տոգնակի:

Ան Հոլովում

Ան Հոլովման են պատկանում այն բառերը, որոնք տրականում ստանում են ան Հոլովիչը. Ան Հոլովումը վերջադրական բնույթի է:

Հոգնակի տրականը կազմվում է հոգնակի ուղղականից՝ ավելացրած ու: Քացառականի եզակին ունի ևն, իծ, իսկ հոգնակին ուծ, էն վերջավորությունները, գործիականը և՛ եզակի, և՛ հոգնակի թվի համար՝ օվ: Մի խումբ բառերի բացասականն ու գործիականը կազմվում են տրականից, որիչներինը՝ ուղղականից:

Ան Հոլովման պատկանում են՝

ա) Տարվա եղանակների անուններից ամառ-ամռան, ձմեռ-ձմռան բառերը: Այս բառերը ենթարկվում են նաև վա Հոլովման՝ ամրովա, ձմրովա:

բ) Գրարարում բառավերջում ն ունեցող և խոսվածքում այդ ն-ն կորցրած բառերի մեծ մասը. լիզ-լիզան, ասեղ-ասիան, դ՛ուռ-դ՛րոսն, մուզ-մըզան, ձ՛ուզ-ձ՛րզան, շոտա-շրոտան, անեղ-անզան, բ՛եռ-բ՛էռան, կամ-կաման և այլն.

Այս կարգի վաղ, ձ՛նո, դ՛առ, հառս, թոռ բառերը ան Հոլովման շեն ենթարկվում:

գ) Ուժ-ով վերջացող բառերը. հոտում-հոտման, հ՛էսում-հ՛էսման, սիլոսածում-սիլոսածման, սօծմբոնում-սօծմբոնման, խօստում-խօստման և այլն:

դ) Մի խումբ այլ բառեր. արուն-արեան, լուծ-լրծան, թումբ-թըմբան, մուտ-մրտան (իհնում է նաև մրտու), խուտ-խրտան, հ՛ապ-հ՛ապան (նան՝ հ՛ապի), խունզ-խընզան և այլն:

Ան Հոլովման օրինակ

Եզակի

Տոգնակի

Ուղղ. լուծ
Տր. լրծան
Քաց. լրծէն,—իծ
Փործ. լ՛րծօվ

լրծներ
լրծներու
լրծներուծ,—էն
լրծներով

Գրարարում ն-ով վերջացող բառերը Այսչեղերու խոսվածքում ան Հոլովիչով Հոլովվելու կորցրած ն-ն վերստանում են եզակի թվի բացասական, գործիական և հոգնակի թվի բոլոր Հոլովներում.

Եզակի

Տոգնակի

Ուղղ. դ՛ուռ
Տր. դ՛րոսն
Քաց. դ՛րոնէն,—իծ
Փործ. դ՛րեօվ

դ՛րոներ
դ՛րոներու
դ՛րոներուծ,—էն
դ՛րոներով

Վա Հոլովում

Վա Հոլովման պատկանում են այն բառերը, որոնք տրականում ստանում են վա Հոլովիչը: Քացառական Հոլովը կազմվում է տրականից և ունենում է եզակիում ած, նէ, հոգնակիում՝ ուծ վերջավորությունները: Ա՛ վերջավորություն ունեն ոչ բոլոր բառերը, իսկ ած, ուծ կապակցություններից բուն վերջավորությունն է ձ-ն:

Տեղանունները բացատրականում կարող են ունենալ ան վերջավորութիւն, բայց ավելի շուտ՝ ա, որի զեպքում բացատրականը չի տարբերվում տրականից: Տեղանունների բացատրականը Լն վերջավորութիւն չի ունենում:

Գործիականը կազմվում է ուղղականից, վերջավորութիւնն է օվ:
 Վա հոլովման ենթարկվում են՝
 ա) Ի ձայնավորով վերջացող տեղանունները. Մուկի-Մուկըվա, Կառպի-Կառպըվա, Զանգի-Զանգըվա, Լոռի-Լոռվա, Փառպի-Փառպըվա և այլն:

բ) Փամանակ ցույց տվող բառերը. տարի-տարվա, շապատ-շապարվա, կէսօր-կէսօրվա (կէսավար), չորրորդ-չորրորդվա, լուսու-լուսվա փաղար, ամիս-ամսըվա, էրզուշապտի-էրզուշապարվա, ալսպես նաև՝ շարաթվա մյուս օրերի անունները:

Սր բառը պատկանում է գրաբարակերպ հոլովման, բայց կարող է հոլովվել նաև վա հոլովիով՝ օրվա:

Տարի, շապատ, ամիս բառերը հոլովվում են նաև ու հոլովիչով:

զ) Գոյականաբար գործածվող ժամանակի մակբայները. շուղ-շուղվա, հէրու-հէրովա, հ՛առէն-հ՛առէնվա:

դ) Վա հոլովման են ենթարկվում նաև մաշ-մաշվան և կէս բառերը՝ վերջինս միայն բարբոթիան մեջ. ամիսուկէս-ամիսուկիսովա, իսկ առանձին վերջրած ենթարկվում է ու հոլովման՝ կէս-կիսու:

Վա հոլովման օրինակներ

	եզակի	հոգնակի	եզակի
Ուղղ. տարի	տարիներ	տարիներ	լօռի
Տր. տարվա		տարինէրու	լօռվա
Բաց. տարվընէ (տարված)		տարինէրոժ	լօռվա,-ժ
Գործ. տարով		տարինէրով	լօռիով

Օ հոլովում

Օ հոլովման են ենթարկվում հէր, մէր, ախպէր և գրանցով բազարըրված բառերը, ինչպես՝ սանամէր-սանամօր, հօրօխպէր-հօրօխաօր, բավորհէր-բավորհօր և այլն:

Օ հոլովումը ներգրական ընտրթի է:

Տրական հոլովը կազմվում է բառի և ձայնավորի փոխարեն օ ավելացնելու ճանապարհով: Բացատրական և գործիական հոլովները կազմ-

վում են տրականից: Բացատրականը եզակիում ունի իժ, Լն վերջավորութիւնները և, ի տարբերութիւն մյուս հոլովումների, ավելի պործածականը իժ վերջավորութիւնն է: Հէր, մէր բառերի բացատրականը կարող է ունենալ նաև ուժ վերջավորութիւն. հօրում-մօրում ը՛րնենժ ու համարէլով էկաժ. հօրում-մօրում շուրթօրժու:

Հոգնակի բացատրականը ունի ուժ վերջավորութիւնու Ախպէր բառը հոգնակի ուղղականում ախպըրներ ձևով հանդես գալու կամ տրականում երկրորդ հոգնակիակերտ մասնիկն ստանալու զեպքում հոլովվում է հէր և մէր բառերի հոգնակիի նման, իսկ ախպըրդիկ ձևով՝ հոլովվում է նրանցից աարբեր և բացատրականում ստանում է Լն կամ իժ, տրականում՝ ուժ վերջավորութիւնները: Գործիականը եզակի և հոգնակի թվերում ունի օվ վերջավորութիւն:

Տալիս ենք այդ երեք բառերի հոլովումը:

			Եզակի		
Ուղղ.	հէր	մէր	ախպէր		
Տր.	հօր	մօր	ախպօր		
Բաց.	հօրիժ,-էն	մօրիժ,-էն	ախպօրիժ,-էն		
Գործ.	հօրով	մօրով	ախպօրով		
			Հոգնակի		
Ուղղ.	հէրէր	մէրէր	ախպըրներ	ախպըրդիկ	ախպըրդիկներ
Տր.	հէրէրու	մէրէրու	ախպըրներու	ախպըրդոժ	ախպըրդիկներու
Բաց.	հէրէրոժ	մէրէրոժ	ախպըրնէ-րոժ,-էն	ախպըրդօ-	ախպըրդիկնէ-րոժ
Գործ.	հէրէրով	մէրէրով	ախպըրնէրով	ախպըրդօ-ժով	ախպըրդիկնէրով

Այսպես են հոլովվում նաև սանամէր, սանէր, հօրօխպէր և նման կազմութիւն ունեցող մյուս բառերի հոգնակիները, ինչպես և կ, զիկ մասնիկներով հոգնակի կազմող բառերը, որոնց մասին արդեն սսվել է:

ՈՆ հոլովում

ՈՆ հոլովման պատկանում են այն բառերը, որոնք եզակի տրականում ստանում են ոՆ հոլովը: Բացատրական հոլովը կազմվում է տրականից, գործիականը՝ և՛ տրականից, և՛ ուղղականից: Բացատրականի

վերջավորություններն են էճ, իծ, ուծ (վերջինը միայն հոգնակի թվի համար), գործիականին՝ օվ:

ՈՃ հոլովման պատկանող բառերը բոլորն էլ ցույց են տալիս բարեկամական կամ ազգակցական հարաբերություններ, դրանք են. քուր, կիսուր, տէկրը (տէկրոճ և տէկեր), անէր, սանէր, քալուր, տալվ և սրանցով կազմված բառերը: Տալվ բառի վ-ն զուրս է բնկնում թեք հոլովնեքում-տալոճ, տալոճիծ...: Այսպիսի հարաբերություններ արտահայտող, բայց այս հոլովման տակ շիվարկվող բառերը ենթարկվում են մյուս հոլովումներին:

ՈՆ հոլովման են ենթարկվում նաև հ'ընդեր, տէր բառերը, որոնք ցույց են տալիս փոխհարաբերություններ:

Հոլովման օրինակ

եզակի	հոգնակի
Ուղղ. քուր	քուրեր
Տր. քուրոճ	քուրէրու
Բաց. քուրօճիծ,-էն	քուրէրոժ
Գործ. քուրօճով, քուրով	քուրէրով

Գրաբարականից հոլովում

Բացի նրանից, որ Ալաշկերտի խոսվածքում պահպանվել են գրաբարյան բարոցած հոլովական ձևեր (այդպիսիք կան նաև մյուս բարբառներում և ժամանակակից գրական հայերենում), ունենք 6 բառ, որոնք հիմնականում պահպանում են գրաբարի հոլովման համակարգը: Գրանք են՝ օր, աճկ, ձ'ես, վող, դ'արուն, աշուն: Ահա դրանց հոլովման պատկերը.

եզակի

Ուղղ. օր	աճկ	ձ'ես	վող	դ'արուն	աշուն
Տր. ազուր	աճիճ	ձ'էսած	օղած	դ'արնան	աշնան
Բաց. օրէ (օրվընէ)	աճկէ	ձ'էոնէ	օղնէ	դ'արնանէ	աշնանէ
Գործ. օրով	աճկով	ձ'էսով	օղով	դ'արնանով	աշնանով
			(դ'արնանօժով)	(աշնանօժով)	

Ինչպես երևում է, աճկ բառի տրականը նույնն է գրաբարյան սեռական-տրական աշից ձևի հետ, որի չ-ն գարծել է է, իսկ ց-ն՝ ծ, որը աանբ-մանման օրենքով վերածվել է է-ի: Ա'եսած, օղած տրականները նույնն

են գրաբարյան սեռական-տրական ձևաց, առաց ձևերի հետ: Բացառականի ի ննաճէ, յոսաճէ, ի գարեճէ, յաշնաճէ հոլովաձևերից ընկել է նախդիր միայն: Գործիականում եղած տարբերությունը պետք է վերադրել այն բանին, որ Ալաշկերտի խոսվածքում օվ վերջավորությունը տարածվել է բոլոր բառերի վրա առանց բացառության՝ ստեղծելով միօրինակություն: Գրաբարյան հոլովման հետ նմանություններ ունի նաև ամառ, ձմեռ և խոսվածքում ա և աճ հոլովման ենթարկվող մյուս բառերի հոլովումը, որոնք կորցրել են գրաբարի եզակի թվի վերահանդ և ձայնորդը: Այս բառերի հոգնակիները ենթարկվում են ու հոլովման:

ՀԱՐԱԳՐԻ ԳՈՅԱՎԱՆՆԵՐԻ ՀՈՒՈՒՈՒՄԸ

Հարադիր գոյականները հոլովվում են այնպես, ինչպես ժամանակակից գրական հայերենում:

1) Հարադրության առաջին մասը մնում է անփոփոխ, իսկ երկրորդ հոլովվում է:

եզակի

Հոգնակի

Ուղղ. տուն ու տեղ	տուն ու տէրան
Տր. տուն ու տէղի	տուն ու տէրանէրու
Բաց. տուն ու տէղիծ,—էն	տուն ու տէրանէրոժ
Գործ. տուն ու տէղով	տուն ու տէրանէրով

2) Հարադրության երկրորդ մասը հոլովվում է, իսկ առաջինը բացառականում ու գործիականում հանդես է գալիս տրականի ձևով:

Ուղղ. հէր ու տրդա
Տր. հօր ու տրդի
Բաց. հօր ու տրդիծ
Գործ. հօր ու տրդով

Կարող է հոլովվել նաև հէր ու տրդա, հէր ու տրդի... ձևով, ինչպես որ արված առաջին օրինակը կլինի նաև տուն ու տեղ, տուն ու տէղի... և այլն:

Փոխարեքական իմաստ ունեցող հարադիրների առաջին բաղադրիչը կորցրել հոլովվում, մասնավորապես հնչյունային այս կամ այն փոփոխություն՝ կրածները. աման-չաման, աման-չամեղի, աման-չամեղիծ, աման-չամեղով կամ՝ տուն-տեղ, տուն-տէղի և այլն:

ՔՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿԱՆԵՐԸ

բ) Գրական աստիճանի վրա զբովում է զըճա բառը. հաստ-զըճա հաստ, բ' արագ-զըճա բ' արագ, բ' անծըր-զըճա բ' անծըր, մօղիգ-զըճա մօղիգ, պաղ-զըճա պաղ և այլն:

գ) Գրական աստիճանի վրա զբովում է ջըլիզ բառը. մուտ-ջըլիզ մուտ, լուս-ջըլիզ լուս, գ' էշ-ջըլիզ գ' էշ, խօրօգ-ջըլիզ խօրօգ, լավ-ջըլիզ լավ և այլն:

Գրեւս և ջրիկ բառերով բաղդատական աստիճան կարելի է կազմել զրական աստիճանի բոլոր ածականներից, իսկ ճ' էլիլի բառով՝ ոչ բոլորից: Բաղդատական աստիճան կազմող հիշյալ երեք բառերն էլ նախադաս են զործածելու:

Բաղդատական աստիճանի իմաստը կարելի է արտահայտել նաև բաղդատական հոլովով, երբ խոսքի մեջ այն հակադրվում է ուղղական հոլովով զբովում բառին. Էդա տղէն էն տղէժ մեծ ա-ալս տղան այն տղայից մեծ է:

Գերազարկան աստիճանը կազմվում է զարձայլ զրական աստիճանից՝ ճ' րմնում բանն ավելացնելով. շաղ-ճ' րմնում շաղ, քիճ-ճ' րմնում քիճ, սեկ-ճ' րմնում սեկ, կարմիր-ճ' րմնում կարմիր և այլն:

Հարաբերական ածականի կազմությունը

Այն հարաբերական ածականները, որոնք ցույց են տալիս մի նյութից պատրաստված, կազմված, կառուցված լինելը, կազմվում են էլ ածանցով. քարե, հօգէ, փէղէ, բքմբբլէ, կավէ և այլն:

Վերաբերելու են ցույց տվող հարաբերական ածականները կազմվում են գան վերջածանցով, որը բառին է միանում ա հոդակապով. հօրադան, մօրադան, տընադան, գ'եղադան և այլն:

Ածականի հոլովումը

Գոյականաբար զործածվող որակական ածականները հոլովվում են ի հոլովիչով: Հարաբերական ածականները չեն հոլովվում:

Օրինակ. հոգնակի

Ուղղ. լավի	լավերըն
Տր. լավի(ն)	լավերու(ն)
Բաց. լավիժ,—էն	լավէրոժ,—էն
Գործ. լավօվ	լավէրօվ

Ալլաշկերտի խոսվածքն ունի բանակական կամ բացարձակ, շափական և բաղմուտպատական թվականները

Բանակական թվականներն ունեն հետևյալ տեսքը. մէկ, էրդու, իրեկ, շուս, հինգ, վեժ, յօտ (օխտ), ուտ, ին (ինք), տաս (տասը), քան, լեռէտուն (լեռտուն), քառասուն (բառասուն), հ' իժուն, վածուն, յօտանասուն (ոխտանասուն), ուսանասուն, ինքսուն, հարսուր, հազար: Ճանաչողների հետ միավորները միանում են վերջից. տասնավորների վրա ավելանում է թ ձայնավորը, բացի այն դեպքերից, երբ միացողները Էզուս և իրեկ թվականներն են (տասէրգու, քսանիրեկ). տասներմէկ, տասնըշտուս, տասներհինգ, տասնըվեժ, հ' իժունբուտ, վածունների և այլն:

Բաղդարյալ թվականների հարյուրավորի կամ հազարավորի և միավորի ու տասնավորի միջև կարող է ու շաղկապը և՛ զրվիլ, և՛ չզրվիլ. հարսուր մէկ, էրդու հարսուր հինգ, հազար իրեկ, հազար հ' իժուն, բայց՝ հարսուր ու մէկ, հազար ու մէկ, հարսուր ու հինգ, հազար ու հ' իժուն և այլն: Հարսուր և հազար բառերը թ չեն ստանում:

Չափական թվականները կազմվում են բանակական թվականներից՝ նոժ ածանցով. էրդու-էրքրանոժ, իրեկ-իրէկնոժ, շուս-շօտնոժ, հինգ-հրեկնոժ, վեժ-վէժնոժ և այլն: Մէկ բանակական թվականից շափական չի կազմվում. զրա փոխարեն կա րրիկնոժ, որ նշանակում է մեկնոց:

Բաղմուտպատական թվականները ևս կազմվում են բանակականներից: Բաղմուտպատական թվական կազմելու համար բանակականի հետ զործածվում է տաղ բառը. մէկ տաղ, հինգ տաղ, քան տաղ, հարսուր տաղ, հազար տաղ: Այս ձևով կարելի է բաղմուտպատական կազմել բոլոր բանակականներից:

Խառա և պաղիգ բառերով ևս կազմվում են բաղմուտպատականներ, բայց այդպիսիները քիչ զործածական են:

Գասական թվականներ չունի Ալլաշկերտի խոսվածքը: Գասականի իմաստը կարելի է արտահայտել վերա բառով. վերա իրէկին, վերա շուսին, վերա յօտին և այլն, որոնք նշանակում են՝ երրորդ անգամ, չորրորդ անգամ, յօթերորդ անգամ:

Յ Էզուս բառը Էզուս ձևով հանդես է գալիս միայն լավական թվականների կազմության մեջ:

Քաշիականութիւնը արտահայտում է քանակականների կրկնութեամբ, մէկ-մէկ, էրգու-էրգու, ուտ-ուտ, ին-ին և այլն: Ամէլդուն մէկ-մէկ գ'իբի հասամ, ամէլդուն էրգու-էրգու խրնծոր տվին (յուրաքանչյուրին մեկական զիրք հասամ, յուրաքանչյուրին երկուական խնծոր տվեցին):

Քվականի նա զոյականը միշտ գործածվում է եզակի թվով. մեկ մատ, հազար մատ, հարուր էրէիս, հ'իծուն տարի, վածուն խուծ և այլն:

Քվականների ելովումը

Պոյականաբար գործածվող թվականները հոյովում են: Ածականի նման սրանք էլ ենթարկվում են ի հոյովման (խոսքը եզակի թվի մասին է. հոգնակիում ենթարկվում են ու հոյովման):

Եզակի

	Մէկ	Երկու	Յոսնոսըն	Մէկերըն	Յոսնոսներըն
Ուղղ.	մէկըն	յոսնոսըն	մէկերըն	յոսնոսներըն	
Տր.	մէկի(ն)	յոսնոսի(ն)	մէկերու(ն)	յոսնոսներու(ն)	
Բաց.	մէկիծ, էն	յոսնոսիծ, էն	մէկերուծ, էն	յոսնոսներուծ, էն	
Պործ.	մէկոս	յոսնոսոս	մէկերոս	յոսնոսներոս	

Մէկ բառի բացասական հոյովը արտահայտում է նաև մակրայի իմաստ. մէկէն ըստ պրոծի-միանգամից աստ վերջացրու, մէկէն կըզրեծ-միանգամից կորեց և այլն:

Պ Ե Բ Ա Ն Ո Ւ Ն

Այաշիբարի խոսվածքում զերանուններն ունեն հետաջալ տեսակները. անձնական, ստացական, ցուցական, փոխադարծ, հարցական, որոշյալ, անորոշ, միտական:

ԱՆՁՆԱԿԱՆ ՊԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Անձնական զերանուններն են. յես, դ'ու, էնի, հ'ինկ, մենկ', դ'ուկ, ընդոկ, ուրանկ: Անձնական զերանունները հոյովվում են այսպես (յես, դ'ու, մենկ, դ'ուկ, հ'ինկ զերանուններն ունեն սեռական հոյով, որը ձևով տարբեր է տրականից):

4 Մինչև 40-ական թվականները ձերանուններից ոմանք գործածում էին մեկ:

Եզակի

	Մէկ	Երկու	Յոսնոս	Մէկ	Յոսնոս
Ուղղ.	յես	դ'ու	էնի	հ'ինկ	
Սեռ.	իմ	քու	—	ուր	
Տր.	ընծի	քէզի, քըզի, քն	ընգուր	ուրին	
Բաց.	ընծնէ	քէզնէ, քըզնէ	ընգըրնէ	ուրնէ	
Պործ.	ընծոս	քէզոս, քըզոս	ընգըրնոս	ուրնոս	

Հոգնակի

	Մէկ	Երկու	Յոսնոս	Մէկ	Յոսնոս
Ուղղ.	մենկ	դ'ուկ	ընգոկ, ընգոնկ	ուրանկ	
Սեռ.	մեր	ձ'եր	—	—	
Տր.	մէզի, մըզի	ձէզի, ձ'ըզի	ընգոծ, ընգոնծ	ուրանծ	
Բաց.	մէզնէ, մըզնէ	ձ'էզնէ, ձ'ըզնէ	ընգընծնէ, ընգընծոս	ուրընծնէ	
Պործ.	մէզոս, մըզոս	ձ'էզոս, ձ'ըզոս	ընգընծոս, ընգընծոս	ուրընծոս	

Անձնական զերանունների բացասական հոյովը ունի նև վերջավորութիւնը, բայց երբեմն ստանում է իծ. ընծնիծ, քէզնիծ, մէզնիծ և այլն, որը պետք է բացատրել զրական լեզվի աղղկեցութեամբ:

Պործիական հոյովը ստանում է զոյականների հասուկ օվ վերջավորութիւնը:

ՍՏԱՅԱԿԱՆ ՊԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ստացական զերանուններն են՝ իմ, քու(մ), ընդուր, ուր, մեր, ձ'եր, ընգոծ, իմեր, քումեր, մերնիք, ձ'երնիք, ուրնիք, ընգուրնիք, ընգոծնիք, ընգուր ընգոծ ստացականները չեն հոյովվում, իսկ մյուսները հոյովվում են զոյականների նման:

	Մէկ	Երկու	Յոսնոս	Մէկ	Յոսնոս
Ուղղ.	իմ(ն)	քում(ն)	իմեր(ն)	քումեր(ն)	մեր(ն) ձ'եր(ն)
Տր.	իմի(ն)	քումի(ն)	իմերու(ն)	քումերու(ն)	մերի(ն) ձ'երի(ն)
Բաց.	իմիծ, ոս	քումիծ, ոս	իմերուծ, էն	քումերուծ, էն	մերիծ, ոս - ոս ձ'երիծ, ոս
Պործ.	իմոս	քումոս	իմերոս	քումերոս	մերոս ձ'երոս

ՅՈՒՑԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Յուցական գերանուններով հարուստ է Ալաշկերտի խոսվածքը: Դրանք են. էրա «այս», էդ «այդ», «էն» «այն», էրա «աս», էդի «դա», էնի «նա», էրանկ «սրանք», էրոնկ «դրանք», ընդրանկ «նրանք», մէ-գնկ «մյուս», էղմյա «այսպես», էնմյա «այնպես», հօղա «այստեղ», հօղի «այդտեղ», հօնի «այնտեղ», էրատեղ «այստեղ», էրտեղ «այդտեղ», էնտեղ «այնտեղ», էրաքան «այսքան», էրքան «այդքան», էնքան «այնքան» և այլն:

էրա, էդ, էն գերանունները ունեն միայն ուղղական հոլով, մյուս հոլովների համար գործածվում են էրա, էդի, էնի գերանունների համապատասխան հոլովածները: Այս բոլոր վեց գերանունների համար հոգնակի թվում կա երեք բառակ՝ էրրանկ, էրոնկ, ընդրանկ (ընդրոնկ):

Մէրքի, էրատեղ, էրտեղ, էնտեղ, էրաքան, էրքան, էնքան ցուցականները հոլովվում են գոյականների նման:

Չին հոլովվում հօղա, հօղի, հօնի ցուցականները. գործածական են միայն սրանց բացառական հոլովները. հօծկա, հօծկի, հօնծկի (այստեղից, այդտեղից, այնտեղից):

Հոգնակի թիվ չունեն էղմյա, էնմյա, հօղա, հօղի, հօնի ցուցականները:

Որոշիլ հոգ ստանում են մէգէլ, էրատեղ, էնտեղ, էրաքան, էրքան, էնքան ցուցականները և էրա, էդի, էնի, էրրանկ, էրոնկ, ընդրրանկ ցուցականների տրական հոլովները:

Յուցական գերանունների հոլովման պատկերը հետևյալն է.

		Եզակի				
Ուղղ.	էրա	էդ	էն	էրա	էդի	էնի
Տր.	էրան	էդար	ընդար	էրան	էդար	ընդար
Բաց.	էղրնէ	էդրնէ	ընդրնէ	էղրնէ	էդրնէ	ընդրնէ
Գործ.	էղրնով	էդրնով	ընդրնով	էղրնով	էդրնով	ընդրնով
	էղրով	էդրով		էղրով	էդրով	

		Հոգնակի		
Ուղղ.	էրրանկ	էրոնկ	ընդրանկ	ընդրոնկ
Տր.	էրրան	էրոն	ընդրան	ընդրոն
Բաց.	էրրննէ	էրոննէ	ընդրննի	ընդրոննէ
		էրրննէ		ընդրոննէ
Գործ.	էրրննով	էրոննով	ընդրաննով	ընդրոննով
		էրրննով		ընդրոննով

Եզակի

Ուղղ.	մէգէլ(ըն)	էրատեղ(ըն)	էրաքան(ըն)
Տր.	մէգէլի(ն)	էրատէրի(ն)	էրաքանի(ն)
Բաց.	մէգէլիծ, -էն	էրատէղէն	էրաքանիծ, էն
Գործ.	մէգէլով	էրատէղով	էրաքանով

Հոգնակի

Ուղղ.	մէգէլներ(ըն)	էրատէրան(ըն)	էրաքաններ(ըն)
Տր.	մէգէլներ(ն)	էրատէրան(ն)	էրաքաններ(ն)
Բաց.	մէգէլներած, -էն	էրատէրանած, -էն	էրաքաններած, -էն
Գործ.	մէգէլներով	էրատէրանով	էրաքաններով

ՓՈՒՍԱԳԱՐՁ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ալաշկերտի խոսվածքում փոխադարձ գերանունները ներկայանում են ընդամենը երեք բառով՝ հիրաւ, մկզմկի, մկզմկու, որոնք չունեն եզակի թիվ: Մէգմէղու և մէգմէղի փոխադարձ գերանունները որոշող հոգ ստանում են, իսկ հիրաւը՝ ոչ:

Փոխադարձ գերանունները պատկանում են ու հոլովման և հոլովվում են գոյականների նման:

Ուղղ.	—	—
Տր.	հիրար	մէգմէգի
Բաց.	հիրարած	մէգմէգած
Գործ.	հիրարով	մէգմէգով

ՀԱՐՑԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Հարցական գերանուններն են. զո՞ր «ո՞վ», ի՞ն՞ճ, քա՞նի, քա՞նիս, ին՞ճքա՞ն «ինչքան», զո՞ր մէց սո՞ր մեկը», զո՞րքի «ոգնակի ո՞րք», զո՞ր սու՞ր, չե՞պ սե՞րք», հօ՞րի, հր՞նճի «ինչու՞», հօ՞ւստ «սո՞րտեղից», իմա՞լ «ինչպե՞ս», զո՞րտեղ և այլն: Հոգնակի թիվ ունեն ի՞ն՞ճ և զո՞րտեղ հարցականները, մյուսները գործածվում են միայն եզակի: Հարցական գերանուններից որոշող հոգ ստանում են. ի՞ն՞ճ-ի՞ն՞ճըն, քանի՞ս-քանի՞ս-սըն, ին՞ճքա՞ն, ին՞ճքա՞նըն, զո՞րտեղ-զո՞րտեղըն:

Հարցական գերանունները հոլովվում են: Չհոլովվող են իմա՞լ, հր՞նճի, հօ՞րի, զո՞ր, զո՞րքի հարցականները:

Եզակի

Ուղղ.	վո՞ր	ի՞նճ	քա՞նիս	վո՞րտեղ
Տր.	վի՞ր	ինճի՞	քանիսի՞	վո՞րտեղի
Բաց.	վիրե՞ն, -իծ	ինճե՞ն, -իծ	քանիսե՞ն, -իծ	վո՞րտեղէն, իծ
Փոքծ.	վիրեօ՞վ	ինճօ՞վ	քանիսօ՞վ	վո՞րտեղօվ

Հոգնակի

Ուղղ.	ինճե՞ր	քանիսե՞ր	վո՞րտերան
Տր.	ինճերո՞	քանիսներո՞	վո՞րտերանու վո՞րտերաներու
Բաց.	ինճէրո՞ծ	քանիսներո՞ծ	վո՞րտերանուծ վո՞րտերանէրուծ
Փոքծ.	ինճերօ՞վ	քանիսներօ՞վ	վո՞րտերանօվ վո՞րտերաներօվ

Հարցական զերանունները գործածվում են նաև առանց հարցական իմաստի. այս դեպքում նրանք ստանում են հարաբերական նշանակություն. վոր հասա՞վ՝ գարգիծ-ով հասա՞վ՝ խոփց, լեպ հոգա՞ր՝ դի՞գա—երբ ուզի՞ կգա, զոր հոգա՞ր՝ կէրտա—ուր ուզի՞ կգնա:

ՈՐՈՇՅԱԼ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Որոշյալ զերանուններն են. հրմէն, ամէղ սամնե», սաղ «բորբոք», սամբողջ», հրմէն ինճ «ամեն ինչ», որոնք ունեն հոգնակի կամ հավաքական իմաստ: Փորձածվում են կ' որոշիչ հոդով, կ' առանց հոգի: Որոշյալ զերանունները հարվում են:

Ուղղ.	հ'րմէն	սաղ	հ'րմէն	ինճ
Տր.	հ'րմնու	սաղի	հ'րմէն	ինճի
Բաց.	հ'րմնուծ	սաղիծ	հ'րմէն	ինճիծ, -էն
Փոքծ.	հ'րմնօվ	սաղօվ	հ'րմէն	ինճօվ

ԱՆՈՐՈՇ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Անորոշ զերանուններն են. մէղ, մէ, մի, ֆըլան «այսինչ», բէֆան «այնինչ», ֆըլանքյաս «այսինչ», բէֆանքյաս «այնինչ», որիչ: Մէ անորոշը մէլ բարի կրճատ ձևն է և միշտ նախադաս է գործածվում, իսկ մի անորոշը՝ միայն ետադաս. մէ սուն, տուն մի, մէ փէղ, փէղ մի և այլն: Մի անորոշի ի ձայնավորը կրճատվում է, եթե հաջորդ բառն սկսվում է ձայնավորով և արտասանական դադար չի տրվում մի-ից հետո. կրնիդ

մ'ըսած—մի կին ասաց: Երբ նախորդ բարբ վերջանում է ա ձայնավորով, այլ ա-ն անորոշից առաջ վերածվում է է-ի. էրէխմ բէլեծ—մի երեխա թալից: նախորդ բարբ բաղաձայնով վերջանալու դեպքում մի-ն կարող է դասնալ րմ. տուն բմ քանդրվալ-մի տուն քանդրից:

Մէլ-ը գործածվում է թե՛ նախադաս, թե՛ ետադաս. մէլց անտէր, անտէրի մէլց:

Անորոշ զերանունները որոշիչ հոգ չեն կարող ստանալ:

Մէլց, մէ, մի անորոշները հոգնակի թիվ չունեն: Մէ, մի զերանունները չեն հարվում, մէլ-ը հարվում է համանուն թվականի նման: Ֆըլան, բէֆան, ֆըլանքյաս, բէֆանքյաս անորոշները ենթարկվում են ի հարվման, հոգնակիում՝ աւ հարվման:

Եզակի

Հոգնակի

Ուղղ.	ֆըլան	բէֆան	ֆըլաններ	բէֆաններ
Տր.	ֆըլանի	բէֆանի	ֆըլաններու	բէֆաններու
Բաց.	ֆըլանիծ, -էն	բէֆանիծ, -էն	ֆըլաններուծ	բէֆաններուծ
Փոքծ.	ֆըլանօվ	բէֆանօվ	ֆըլաններօվ	բէֆաններօվ

Ժխտական ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ժխտական զերանուններն են. հէճ «սշինչ», հէճ մէլց, հէճ ր'ան «սշինչ», սալինչ բան»: Սրանք հոգնակի թիվ չունեն, որոշիչ հոգ չեն ստանում: Հարվում են ի հարվելով:

Ուղղ.	հէճ	հէճ մէլց	հէճ ր'ան
Տր.	հէճի	հէճ մէլցի	հէճ ր'անի
Բաց.	հէճիծ	հէճ մէլցիծ, -էն	հէճ ր'անիծ, -էն
Փոքծ.	հէճօվ	հէճ մէլցօվ	հէճ ր'անօվ

Հ Ո Պ

Այլազերտի խոսվածքն ունի սաացական, դիմորոշ, որոշիչ և անորոշ հոգի: Յուցական հոգեր չունի:

Սաացական հոգերն են՝ ա, ս, ն: Ս հոգը գրվում է անձնական զերանվան առաջին դեմքի սեռական հոլովի փոխարեն, ա հոգը՝ երկրորդ դեմքի, ն հոգը՝ երրորդ դեմքի: Սաացական հոգերը գործածվում են զերանունների եզակի թվի փոխարեն, հոգնակի թվում պատկանելության իմաստն արտահայտվում է զերանուններով. ճ'նեկերս, ճ'նեկերսս, ճ'նե-

ներն = իմ ձեռքերը, քո ձեռքերը, նրա ձեռքերը, իսկ երկուսի կամ շատերի ձեռքերը նշելու համար ասվում է. մեր ձեռքեր, ձեր ձեռքեր, քեզանձ ձեռքեր: Եւտադաս գործածութեան ժամանակ մեր, ձեր դերանունները կենթարկվում են կրճատման. ձէկներ մե, ձեռներ ձե: Մըզի (մեզի), ձ'ըզի (ձ'էզի) դերանունները ետադաս գործածվելիս չեն հասարկվում. գ'ըջօխ մըջի, գ'ըջօխ ձ'ըջի:

Որպէս դիմորդ հող գործածվում են նույն ւ, ա, և հոգերը, բայց շատ սահմանափակ շարքով, այն էլ՝ գրական լեզվի ակնհայտ աղբնջությամբ. աշագէտդները, աշագէտդներտ, աշագէտդներն = աշակերտներս, աշակերտներդ, աշակերտներդ: Գիմորդ հող աննցող բառը կարող է գործածվել անձնական դերանվան ուղղական հարցի հետ, որի դեպքում ստանում ենք լրացուցիչ շեշտովածութիւն և համաձայնութիւն դեմքով. գ'ուկ՝ աշագէտդներտ, մենկ՝ աշագէտդներս օկնէծիկն հիվերնդին = մենք՝ աշակերտներս, օկնեցիկն հիվերնդին:

Այլաշկերտի խոսովածքում որպէս որոշիչ հող գործածվում է միայն ն-ն:

Որոշիչ հող ստանալ կարող են ուղղական և տրական հոլովներով դրված բառերը: Ենթական որոշիչ հող է ստանում.

ա) Երբ տրամաբանական շեշտ է կրում. Առաջ գրն գ'ընած, էգալ Գուրգէ'նըն:

բ) Երբ ենթակային հարցրում է օժանդակ բայը: Այս դեպքում ենթական կարող է տրամաբանական շեշտ կրել և չկրել. Առաջն ա գ'ածե, Գուրգէ'նն ա կէն:

գ) Երբ ենթական գոյականաբար գործածված բառ է. էրգուսըն շոսից պղզից ա:

դ) Երբ ենթական ստորոցայի համեմատությամբ ետադաս է. գ'ասըն կատած Արամըն, խողըն քաղեծ Վաստանըն:

ե) Երբ ենթակա դարձած բառը վերջավորվում է ձայնավորով. Գէվօն խօսած, խօսած Գէվօնն Մլուս բոլոր դեպքերում ենթական գործածվում է անհող՝ Առաջ գ'ընած գ'կող ա այլն: Բաղադրյալ ստորոցայի գոյական վերջոյի գործածվում է որոշիչ հողով, էքն անձնանուն է. աշխատողն Առողն ա:

Հանրման և մատուցման անուղղակի խնդիրները միշտ դրվում են որոշչալ տրականով և օժանդակ և անհող հող. աղբրակըն աղբի Սուրիդին, գ'օժակիներ բաժնէծին գ'կողմիներուն, ճամպոտներն հասան կարնրնջին:

Հանցման և մատուցման անուղղակի խնդիրները հող չեն ստանում

այն դեպքում, երբ բառը հոգնակի իվում օժ հոլովման է պատկանում. գ'սրծիկներ բ'ամնէծին գ'կղածօծ, ճամպոտներն մողէծան քախիքծօծ:

Ուղիղ խնդիրը որոշիչ հող ստանում է.

ա) Երբ տրամաբանական շեշտ է կրում. Ուստա Քօժօն տախտա'գրն առչնջ:

բ) Երբ ունի որոշիչ կամ հատկացուցիչ, պայմանով, որ տրամաբանական շեշտը խնդրի լրացման վրա չիւնի. Գէվօն ուր սողըն քաղեծ, Գէվօն քաղեծ պղզից առղըն:

Յնն տրամաբանական շեշտը դրվում է լրացման վրա, խնդիրը գործածվում է առանց հողի. Գէվօն ո'ւր սող քաղեծ:

գ) Երբ ուղիղ խնդիրը բաղաձայնով վերջացող անձնանուն է. Սամվէլ գ'ըրգեծ Առողն, դարգեծ Գարուշին, ծնեծ Գարուտին: Չայնավորով վերջացող անձնանուն ուղիղ խնդիրը գործածվում է առանց հողի. Սամվէլ գ'ըրգեծ Վանօլ, դարգեծ Կարօլ, ծնեծ Սարօլ: Այլ դեպքերում ուղիղ խնդիրը, լինի իր, թն անն ցույց արդ բառ, դրվում է առանց որոշիչ հողի. Մարօն հած թրեւեծ, չ'ուր բ'էրեծ, օճխար կլտեծ. էրէխն մօր շաղ քուգա:

Գոյականով արտահայտված պարագաներից որոշիչ հող միշտ ստանում է տրական հոլովով դրված այն տեղի պարագան, որը ցույց է առնալ առարկայի մակերևութիւնը, գազաթը, ծայրը, սկիզբը, վերջը որպէս գործողութեան կատարման տեղ. Կայն գ'էրնի ծիրին, ձ'եղըն գ'ըրն գ'ըլլումն, քարըն գ'ըրեծ պաղին:

Առանց հողի են գործածվում տրականով դրված նպատակի պարագան (Սասան վազով ջըրու), ուղղական և տրական հոլովներով տեղի պարագաները, որոնք ներդրական հոլովի իմաստ անեն. Քօժօ արէստանօժ գ'օժիկն շաղ կա, գ'աղընծ թաղա փուկա ա գ'ըրած: Ե որոշիչ հողից առաջ, էրբ բառը վերջանում է բաղաձայնով, ավելանում է ր ձայնավորը՝ քարըն, տունըն և այլն:

Ենն հարցրող բանն սկսվում է ձայնավորով, և հողը արտասանվում է աղ ձայնավորի շաղ կա, գ'աղընծ թաղա փուկա ա գ'ըրած: Ե որոշիչ հողից առաջ, էրբ բառը վերջանում է բաղաձայնով, ավելանում է ր ձայնավորը՝ քարըն, տունըն և այլն:

Ենն հարցրող բանն սկսվում է ձայնավորով, և հողը արտասանվում է աղ ձայնավորի շաղ կա, գ'աղընծ թաղա փուկա ա գ'ըրած:

Ենն հարցրող բանն սկսվում է ձայնավորով, և հողը արտասանվում է աղ ձայնավորի շաղ կա, գ'աղընծ թաղա փուկա ա գ'ըրած:

Ենն հարցրող բանն սկսվում է ձայնավորով, և հողը արտասանվում է աղ ձայնավորի շաղ կա, գ'աղընծ թաղա փուկա ա գ'ըրած:

Անորոշ հոգն է մի կամ մէջ: Հողի արժեք ունի նաև մէկ բարձր՝ անորոշ կիրառութիւնով: Անորոշ հոգնի գործածութեան մասին պետք է սակ նույնը, ինչ սակն ենք արդեն դրանց վերաբերյալ որպէս անորոշ գերանուններ:

Անորոշ հոգի հետ կարող է գործածվել նազ բարձր, ինչպէս՝ մէ հող տուն, շուն և այլն:

Նման գործածութիւնը Հր. Աճառյանը համարում է «անորոշի գաղափարի գորացում»⁵:

Բ Ա Յ

ԲԱՅՆ ԿԱԶՄԱՌԹՅՈՒՆԸ

Հօտ բառակազմական հատկանիշների բայական բառույթներն իրենց կազմութեամբ լինում են երկու տեսակ՝ համադրական և վերլուծական⁶:

Համադրական բայերի բաղադրիչները միանում են մեկ ամբողջական բառի մեջ և սովոր բառակերպից անջատելի չեն: Համադրական բայերը կազմվում են.

ա) բայարմատից կամ այլ խոսքի մասերից և գերբայական մասնիկից. գ՛րբ+ել, խաղ+ալ, բաղ+ան, շար+ել, ժեշտ+ել, գ՛րլխ+ել և

բ) Բայարմատից, բայածանցից և գերբայական մասնիկից. հոս+ն+ել, հեռ+են+ալ, ջառ+ող+ել, փախ+ն+ել:

դ) Երկու արմատից և գերբայական վերջավորութիւնից (արանք կարող են ունենալ կամ չունենալ բայածանցներ), բաշ+բըշ+ել, բօռ+բռռ+ալ, գըծ+գըծ+ալ, բ՛գդ+բ՛ըդ+վ+ել:

Կազմութեան առաջին եղանակն ունեցող բայերը պարզ են, երկրորդները՝ ածանցավոր, երրորդները՝ կրկնավոր համադրական:

Բացի այն բայերից, որոնք բարբառին են անցել ընդհանուր հայերենից, կան մի խումբ համադրական բայեր, որ բարբառային կազմութիւններ են՝ սեփական և փոխառյալ բուռերի հիման վրա ստեղծված. ամբա-գ՛ունել, բողբոջալ, կատնաճ՛ունել, բէղբնալ, բարիշել, բէջարել, թայնել, խուրսել, խուտիւն, խիմիշել, հաղիւն, մուղղրել, նրիշել, կարմրողողալ, թուլալ, թախրբել, թամբընալ, զայնջում, գ՛իփօղել, շըշել, քարմըրել:

⁵ Հր. Աճառյան, Քննաթշուճ Կանի բարբառի, Երեւան, 1953, էջ 142:

⁶ Բայն կազմութեան մասին մտերմաճառն տես Ա. Ա. Աբրահամյան, Բայը մասնակազմից հայերենում, Երեւան, 1962, էջ 29—285:

ճարմըրել, օգնել, շանգրել, գընջել, պէճաղել, գ՛րլխըրել, գըրմըրել, արկնէլիլել, գուշուգորել, օսպէվէրնալ, էսմնալ, բընձորողալ, ցէմէնգել, վրակել, շարգել, հ՛րնակ, շինկել, արւել, գըրուել, կըրիշել, դամասիկել, կրասիկել, քառարվնալ, քըսարբել, թամբնել, նայել, թարմել, հալըրել, Ֆայ-մել, բէպլալ, թագանալ, սըխտել, թարգել, խըրթել, բըշկըրել, քուրբուջ-նալ, հեասօղել, թիմարել, խըրել, դօռն, շքմն, արզգել, խապխըպել, ճիբըրմել, դարմընել, բաղրանել, թագանալ, զըրել, խօթօղնալ (խօթօղը-նալ), զ՛իղի, սըվաղել և այլն:

Աշխկերտի խոսվածքում նա բայեր են կազմվել և կազմվում են այլնայլ խոսքի մասերից, հատկապէս գոյականներից ու անականներից: Նորանոր բայեր կազմելու հիմք կարող են հանդիսանալ և՛ հայերեն, և՛ փոխառյալ բառերը:

Աշխկերտի խոսվածքում, ինչպէս որ հասուկ է հայերենին ընդհան-րապէս, փոխառյալ բայեր՝ որպէս պատարաստի բայական բառույթներ, չկան, այլ կան փոխառյալ անվանական բառերից հայերենի բայական մասնիկներով կազմված բայեր:

Իերենք տարբեր խոսքի մասերից կազմված բայերի օրինակներ.

ա) Պոյականներից կազմված. աշնել, յօրխել, զընջըրել, էրնել, օ՛ւռանել, ճ՛րնել, աղընձել, մառարգել, անգընալ, ամասխել, գօմպել, դօ-րել, մըրխել, նայել, թինգընել, խառղել, շօֆալել, բըշկըրել, լանգել, գըռնել, բըղմըրել, շապոթասել, բըրսել, շըրել, թոխել, բ՛ախել, թիագել, սիւրել, շապախել և այլն:

բ) Անականներից. մուղղրել, ջ՛րջ՛րջօղել, քօսօղել, յարօղել, գիծ-ծօմձել, բ՛օթօղել, թամբընալ, գ՛օտէնալ, ջըրխել, թըրխալ, խալիխնալ, խօթօղալ, կխառել, լալընալ, կխնալ, քօռնալ, հեոսօղել, գօսարնալ, բոտտնալ, ջըհէլնալ, թէլպօղել, պըզըզընալ, ջ՛օճընալ, խըրաղնալ, զըմէ-նալ և այլն:

գ) Թվականներից, որոնց միանում է սառչ բառը. մէզաղղղել, էրգու-արգել, հինգարգել, իրէկարգել, յօտարգել և այլն: Այս ձևով կարելի է բայեր կազմել գրեթէ բոլոր բանական թվականներից:

դ) Մակբայներից. վրաղնալ, քըճընալ, յիզընալ և այլն:

ե) Կապերից. միհել, վէրէվնալ, մօղէնալ և այլն:

Վէրէվնալ, նէրիէվնալ կարելի է համարել նաև մակբայակազմ, նկատի ունենալով, որ վէրևվ, ենէրիէվ բառերը ունեն ոչ միայն կապա-կան, այլև մակբայական գործածութիւն:

Նշված բայերից շատերը, որոնք հասուկ են Աշխկերտի խոսված-

քին, կարող են հանդիպել նաև ուրիշ բարբառներում, նույնիսկ արդի գրական լեզվում, նույն կամ մի փոքր տարբեր տեսքով:

Բազմաթիվ ու բազմազան են համադրական կրկնավոր բայերը, որոնց մի մասը գալիս է ընդհանուր հայերենից, մյուս մասն էլ կազմվել է բարբառի բայակազմական միջոցներով:

Ինչպես արդեն ասել ենք, այս կարգի բայերի երկրորդ արմատի ձանձավորը միշտ վերածվում է ր-ի. քերթբերել, քաշքերել, պոզպրզել, տապտրզել, ֆաղթըրել և այլն:

Նրկրորդ արմատի բաղաձայնը ենթարկվում է փոփոխության (բայց ոչ բունք բառերում) Այգպիտի օրինակներից են. կրոձմբոձել, զրզմըղել, շանձմբոձել, բրզմըղել, ճրզմըղել և այլն:

Այաշկերտի խոսվածքին հատուկ կրկնավորներից են նաև քաշքերել, բ՛ղբըրել, ցակցըրել, բ՛ընբ՛ընալ, զըզըրել, քանգըրզել, քանդընզել, շընընձօղել, սեղալզել, սրտպռել, սրտառալ, ճօճըրել, ճըզճըրել, դ՛էմ-դ՛իսել, լընզընզալ, ձ՛էնձ՛ընել, քամճըրել, ճհրճըրել և այլն:

Առավել շատ են բնաձայնական կրկնավորները, ինչպես. զը՛ոտ-զը՛ոտալ, վընզվընզալ, բօզբրտալ, վլտվլտալ, ճըսլըտալ, վըսվըտալ, լըրլըրալ, խընիընձալ, խըռչիըռչալ, զըժըժալ, ճըզվըզալ, ֆրտաֆրտալ և այլն:

Սրանց հետ միասին խոսվածքում գործածվում են բազմաթիվ բնաձայն կրկնավոր բայեր, որոնք տարածված են այլ բարբառներում և զրական լեզվում:

Ինչպես երևում է բերված օրինակներից, համադրական բայակազմության մեջ ավելի ակտիվ դեր ունի էլ մասնիկը: Տարբեր խոսքի մասերից կազմվածներից և համադրական կրկնավոր բայերից քիչն են ունենալ մասնիկը: Այլ մասնիկ ունեցողները չկարող են, էլ մասնիկով կազմվածները՝ ներգործական: Բնաձայնական կրկնավոր բայեր կազմվում են բազառապես ալ մասնիկով, որոնք բոլորն էլ չեղար են:

Հարադրական կամ վերլուծական բայերը կազմվում են երկու, երեքմ էլ ավելի մասերից, որոնք ձևական տեսակետից անցառ են, բայց իմաստային տեսակետից միանում ու կազմում են մեկ բառույթ: Այսպիսի կազմություններում բայի մասնակցությունը պարտադիր է: Բայը զբվում է վերջադաս, իսկ հարադրված բառը՝ նախադաս:

Բառական իմաստի տեսակետից նայելով՝ հարադրական բայերը լինում են՝

1. Փոխաբերական իմաստ արտահայտող հարադրություններ, նրբ հարադրության բազադրիչները կորցրել են իրենց ուղղակի իմաստը և

միասին արտահայտում են փոխաբերական մի իմաստ. դ՛րջօխ հանել, արվել շօթոձել, հ՛երթծ հ՛ընզնել, ֆասերուն հ՛ընզնել, շուս գ՛ալ (փնտրել), վոդ դարզել (վնասել, զավիկ): վոդ կօխել (մտնել), անկալուս տալ և այլն:

2. Կետով չափ փոխաբերական իմաստ ունեցող հարադրություններ: նայած գործածությունը՝ սրանք կարող են արտահայտել ուղղակի նշանակություն. ձ՛եռ տալ, մ՛էճ հ՛ընզնել, յեղ գ՛առնալ, ձ՛եռօվ էնել, բունջ մըզնել, ալննկ հ՛էլնել, դ՛ըրջօխ դ՛ընել, ֆատիկ էնել, անկ գ՛առնոձել, գ՛ոս տալ, մ՛էճ քաշլ և այլն:

3. Ուղղակի նշանակություն ունեցողներ. ձ՛էն հանել, միակ էնել, գ՛ոձ էնել, գ՛ոս գ՛ալ, խըսա էնել, ֆապ տալ, հանակ էնել, արնազ էնել և այլն:

Ըստ հարադրության կազմելու մեջ խոսքի մասերի ունեցած մասնակցություն, հարադրությունները լինում են՝

1. Գոյակառով հարադրվածներ, որոնց մեջ գոյականը լինում է տարբեր հոլովներով.

ա) Ուղղական հոլովով. ուժ տալ, ամօտանկ տալ, մըհանա բ՛ըրնել, իսակ ֆալել, անգառ կախել, անկ ճօտել, շուսք տալ, քիտ տընզել, գ՛ըրջօխ բ՛ընել, բ՛ածք՛էրնտառն էնել, մաստ գ՛առնալ, հօկի հանել, վըրել սընել և այլն:

բ) Տրական հոլովով. խապու տալ, ջանի գ՛ալ, հածի նըտակ, վըրեն ասնել, հօկու հասնել, բ՛անի դ՛ընել, գ՛օձի էձիկ, գ՛ըխուն տալ:

գ) Բացառական հոլովով. բ՛անիժ հ՛ընզնել, բ՛անիժ հ՛էլնել, հալիժ հ՛ընզնել, կաթիժ հ՛ընզնել, արկվոժ հ՛ընզնել, ճամպոժ հ՛էլնել, ձ՛եռիժ էրտալ, բ՛անիժ հանել, շընօրկիժ հ՛ընզնել:

դ) Գործիական հոլովով. գ՛օձօձօվ հ՛ընզնել, արգօվ էնել, կարօվ հ՛ընզնել, ձ՛եռօվ էնել, անկօվ էնել, գ՛ըխօվ էնել և այլն: Գործիական հոլովով առանվելապես հանդես են գալիս մարտիկ մասերի տեսակները:

2. Ածականով հարադրվածներ. գ՛ըխահան էնել, պըզզահան էնել, սեվ՛հընս նզնել, սեվ՛հընս գ՛առնուլ, ֆվլվաթազ էնել, լեղապարտ էնել, ջըրթիթտ եղնել, խաղաազ էնել, անբախտ գ՛առնալ:

3. Դերանուններով հարադրիներ սակավաթիվ են. հ՛իրար տալ, հ՛իրար առնել, հ՛իրար ֆալել, հ՛իրար հ՛ընզնել, հ՛իրար գ՛ալ, հ՛իրար էձկնել, ուրնօվ էնել:

4. Քվականներով. մէզ էնել, էրգու էնել, իրեկ էնել և այլն, ինչպես և՛ էրգու տազ էնել, իրեկ տազ էնել, շուս տազ էնել, լօտ տազ էնել և այլն:

5. Մակբրայով և տարածական իմաստ արտահայտող բառերով՝ մէ-
ծէմէն էնեկ, փոխէփոխ եղնեկ, տազն ու վըրա էնեկ, հարէհաս եղնեկ,
հատէն հընծընեկ, յեղ մընալ, մոզ դ'ալ, ցած հընգնեկ, դէմ առնեկ,
չեղ տալ, դէն տանեկ, դէս բէրեկ, վըրա դ'ալ, ցած առնեկ, դէն էնեկ և
այլն:

6. Չայնարկութիւնով կամ բնածայնական բառով. հէյ էնեկ, հայ
էնեկ, վայ էնեկ, հօզ էնեկ, ցան էնեկ, հաբան էնեկ, հօ էնեկ, բըշ էնեկ,
դըխէ էնեկ, լըխէ էնեկ և այլն:

7. Բայական հարադրութիւններ. առնեկ-փոխեկ, առնեկ-թըռնեկ,
առնեկ-հընգնեկ, հընգնեկ-հէյնեկ, փոխեկ-պըռնընեկ, էծկեկ-կողղեկ,
քաշեկ-հանեկ, բ'ըռնեկ-առնեկ, ջ'առտեկ-թապեկ, մեռնեկ-պըռնընեկ, քան-
կեկ-թապեկ, հընալ-վըռալ, կայնեկ-մընալ, ուղեկ-պըռնընեկ, հընծընեկ-
կըտալ, հէյնեկ-թապեկ:

Բայարմատով և բայով հարադրութիւն. քաշ տալ, վազ տալ, ժամ
դ'ալ, թարալ տալ:

Քիչ չեն նաև աշուխիս վերածական բայերը, որոնց մեջ բային
հարադրում է ոչ թե մեկ բառ, այլ մի հարադիր կազմութիւն, ըստ
որում այդ հարադրութիւնը կարող է կազմված լինել այլ և այլ խօսքի
մասերից. անկօզ-ունկօզ էնեկ, դ'ըրօս-դ'ըլխու տալ, ձ'եռ-ձ'եռի տալ,
թեզ-թեզի տալ, հ'երես-րէրես էնեկ, ջ'ոճ-ջ'ոճ բ'ըտեկ, մէզ-մէզ էնեկ,
թեզ ու թեզունկ եղնեկ, վոզ ու ձ'եռ հընգնեկ, ծանդր ու թէտեզ էնեկ,
հ'էտտեմ-կըբազ ուղեկ, հայ-հայ էնեկ, ախ ու վախ քաշեկ, ջ'առտ ու
խառտ էնեկ, դէմ ու դ'առծ էնեկ, չէմ ու չում էնեկ, տակ ու հօզ էնեկ,
ձ'էն-ձ'ինի տալ, ուղող-ուղողի եղնեկ, տանող-տանողի եղնեկ և այլն:

Բայական բառային կազմը հարստացվում է նաև փոխառույթ բառե-
րով կազմված հարադրական բայերով, որոնց մեջ բայը անպայման հա-
չընեն է կամ հայեբենի մասնիկավորմամբ բայացված փոխառույթ բառ,
ազդիցածայ էնեկ, սուխի դարեկ, սակն-սակնի զարդեկ, օրխ էնեկ, կու-
շակաթայ էնեկ, պածառ հընգնեկ, դյուլխաթօզ էնեկ, յախա ճըղեկ, թը-
մախ էնեկ, թըմախ հընգնեկ, մայլի մընալ, փարալամիշ էնեկ, փօզմիշ
էնեկ, բուֆըր էնեկ, ջիլլար դաղեկ, յան բ'ըռնեկ, ըտաստ դ'ալ, բըրբալ
տալ, դազմա քաշեկ, փաշու եղնեկ, գօրըրգօտ եղնեկ, դարման էնեկ, բէ-
խաբար եղնեկ, թաշան տալ, դամ բ'ըռնեկ, բաղառ էնեկ, դալի էնեկ, թարզ
տալ, խաբար եղնեկ, մափաբար էնեկ, նաֆաս քաշեկ, նաֆաս առնեկ,
չուսք տալ, թլլիսմ էնեկ, շառ էնեկ, մուստո էնեկ, խաբբան եղնեկ,
խառըր առնեկ, խըսա էնեկ, դիան տալ, մաղանդա դ'ընեկ և այլն:

Այլաշկերտի խոսվածքում, զբարբի և մամանակակից հայերենի
նման, բայատիպարները լինում են պարզ և ածանցավոր:

Պարզ կամ ածանցազուրկ են այն բայերը, որոնք կազմված են բա-
յարմատից և դերբայական մասնիկից, այլ կիրպ տասմ՝ չունեն բայական
ածանց. բէրեկ, քանդեկ, կախեկ, լըսեկ, ցանեկ, ուղեկ, խըմեկ, հանեկ և
այլն:

Պարզ են նաև այն բայերը, որոնք կազմվել են տարբեր խօսքի մա-
սերից: Այս դեպքում նկատի չի առնվում բայահիմք դարձող խօսքի մասի
արմատական, ածանցավոր կամ բարդ լինելը: Հովասարաղես պարզ են
այն բուրբ բայերը ևս, որոնք կազմվել են ածանցավոր և բարդ բառերից՝
գերբայական մասնիկների կցումով. ճիրբըմեկ, սէլվաօրեկ, հընգնալօ-
րեկ, փրօխբօզեկ, կարմբեկ, սէվնալ, փղըրալ, հօրեկ, գաշեկ, դ'արմը-
նեկ, ալլեկ ցախալլեկ, բ'ախեկ և այլն:

Ածանցավոր բայերը բայարմատից կամ հիմքից հետո ունենում են
ածանցներ: Այդ ածանցները կամ քերականական իմաստներ են արտա-
հայտում կամ «մասնակցում են բայական բառույթի բազադրմունք»⁷,
միաժամանակ արտահայտելով քերականական որոշ իմաստներ: Ածանց-
ների զերբ բազմակողմանիորեն վեր հանելով է բնութագրելով պրոֆ.
Ա. Ա. Աբրահամյանը միանգամայն իրավացիորեն դրանք բաժանում է
երկու խմբի և անվանում բազադրութիւն-քերականական ածանցներ և
որև քերականական ածանցներ՝ միեթելով «ստեղծածանց» անվանումը,
բայ չի համապատասխանում այդ ածանցների բնույթին ու նշանակու-
թյանը:

Բազադրութիւն-քերականական ածանցները Այլաշկերտի խոսվածքում
ևս մասնակցում են բայի՝ որպես բառույթի, կազմութիւնը և հանդես են
գալիս իբրև ներկայի հիմքի բազադրների մի խումբ բալերի համար:
Այդ ածանցներն են՝ Ե, Էն: Չ ածանցը չունենք, այն կամ ընկել է կամ
փոխարինվել ց ածանցով, ուղեկ>ուռեկ, կորեկ>կորեկ, փախեկ>
փախեկ, թռչեկ>թըռնեկ, կպչեկ>կըրնեկ, դիպչեկ>դիրնեկ և այլն: Ը-
ածանց>ճանճընալ և ամաչեկ>ամճընալ բայերում շ ածանցը պահպան-
վել է և ազիլացել է ց:

Ան ածանցի ա-ն դուրս է ընկել, իսկ և-ն մնացել է, որով աՆ ածանց
ունեցող բայերը վերածվել են և ածանց ունեցող բայերի. հիվանդանալ>
հիլլընդանալ, ուժովանալ>ուժօվանալ, շըրանալ>լըրնալ, բարեկամա-

7 Ա. Ա. Աբրահամյան, Թալը մամանակակից հայերենում, գիրք 1-ին, Երևան, 1962,
էջ 213:

նալ > ք' արեգրմնալ, լուսանալ > լուսնալ, հայարտանալ > հրարողնալ, մեռանել > մեռնել և այլն:

Մի խումբ բալերից ան ածանցը դուրս է ընկել ամրողչութիւնս: Այս դեպքում գրքարի անանգաժոր բաշխի դիմաց ստացվել են պարզ բաշխի. պահանել > պակել, դարկանել > զարգել և այլն:

Ան անանցը պահանգանել է հատկապես այնպիսի բաշխում, որոնք խոսքածքին են անցել դրական լեզվից կամ գործածվում են կրճակական արտահայտություններում: Նկատված օրինակներն են. ցանդանալ, ուրանալ, գայրանալ, դիմանալ, կարկանալ, պարմանալ, բ'ազմանալ, աղղեզանալ, փրջանալ, մէրջանալ, լրսպանալ, վէճանալ, խոստանալ, ժէրանալ, հ'նդէրանալ:

Ն, և անանցները մտնում են ներկայի հիմքի մեջ. մօղէնալ-կրմօղէնամ, կրմօղէնէնկ, թրունկ-կրթրունիմ, կրթրունէնկ:

Ն անանցը անցյալի հիմքում դուրս է ընկնում. թրա, թրահ', թրահր իմ և այլն: Այն ն. ն, որ ստացվել է ան անանցի կրճատումով, անցյալի հիմքում փոխարինվում է ձ-ով. հիվերդալ-հիվերդոմ, հիվերդոհի, հիվերդոհր իմ և այլն:

Էն անանցի ն. ն անցյալի հիմքում դուրս է ընկնում, նրա փոխարեն ևս դրվում է ձ: Ածանցի է ձայնավորը մտնում է անփոփոխ. մօղէնալ-մօղէնամ, մօղէնի', մօղէնի իմ և այլն:

Նոր բաշխի կաղծելուն էն անանցը չի մասնակցում: Ն անանցի բաղադրութիւնս նոր բաշխի պատահում են. բողզընալ, թաղանալ, ջրհէնալ, էտմընալ և այլն:

Բուն ընդհանական անանցների մեջ մտնում են կրավորական, պատմաական և բազմապատկական անանցները:

Կրավորական անանցն է վ. ն: Պատճառական անանցն է' ում, մասամբ' ծում, որ գալիս է զբարբայրան համապատասխան ոյց անանցից: Պատճառական անանցը դրվում է անցյալի հիմքի վրա և այլ հիմքից կազմված ձևերում անփոփոխ է. վախճումձել-վախճումի, վախճումձի իմ և այլն, բայց հրամայականի եզակիից, որ անանցի ծ. ն ընկնում է. վախճո՞ւ:

Ներկայի հիմքից կազմված ձևերում ծ. ն ընկնում է. կրվախճում, կրվախճուս, կրվախճուս:

Բազմապատկական են դ, ող, կ, կող, կղ, շտ անանցները:

Կող, զղ (կղ) անանցների մեջ, բաղաձայնների կուտակումը ցրելու համար, ավելանում է ր ձայնավորը: Կ, կող, զղ, շտ անանցներից կազմված հատուկներ բաշխի կան միայն, ինչպիս.

կ-ծէծկել:

կող-ծեծկողել, կոխկրողել:

զղ (կղ)-թալզրողել, կէձզրողալ, բ'օծկրողալ:

շտ-խանըշտել:

Էան ընդգրկում ունեն դ և ող անանցները. թալրողալ, թկրլրղալ, թալրողել, ճանգրողել, շանճրողել, զընզրողալ, լընիլըողալ, զընիլըողալ, ճննըողալ, թրպրողալ և այլն:

Բազմապատկական անանցները զերբայական ու եղանակային բոլոր ձևերում պահպանվում են և որեւէ փոփոխություն չեն կրում:

Բ Ա Յ Ի Ս Ե Ռ Ը

Այլազերի խոսվածքում ևս բային հատուկ է սեռի ընդհանրական կարգը: Հստ առարկայի գործողությունը մի այլ առարկայի անմիջականորեն անցնելու կամ շանցնելու, այդ առարկայի վրա, նկատմամբ կատարվելու կամ չկատարվելու, առարկայի կողմից գործողությունն իր վրա կրելու կամ չկրելու, գործողության հետևանքով փոփոխվելու, աղղվելու կամ չփոփոխվելու, բաշխը բաժանվում են երկու մեծ խմբի՝ անցողական և անանցողական սեռադասերի: Անցողական և անանցողական սեռադասերը իրենց հերթին, ինչպես ժամանակակից հայերենում է, ստորաբաժանվում են սեռերի և սեռային առումների: Անցողական սեռադասի մեջ մտնում են ներգործական սեռը և պատճառական սեռային առումը: Անանցողական սեռադասին ևս պատկանում չեզոր ու կրավորական սեռերը և միջին-անցողադարձ սեռային առումը:

Ներգործական սեռը չունի ձևաբանական ցուցիչ, այն որոշվում է իմաստով, ըստ գործողությունը մի այլ առարկայի վրա անցնելու հատկանիշի. վառել (ի՛նձ-փէղ), սովրել (ի՛նձ-ո՞ւս), վարել (ի՛նձ-առղ), ուղել (ի՛նձ-համ), խրմել (ի՛նձ-ջ' ուր), կառուսել (ի՛նձ-դ' իրկ) և այլն:

Պատճառական սեռային առումը Այլազերի խոսվածքում, ինչպես արդեն ասվել է անանցավոր բաշխի կապակցութիւնս, կազմվում է ավ անանցով. հասնել-հասունել, բրկել-բ'բլումել, վախճնալ-վախճումել, ուժովնալ-ուժովժումել, տակնալ-տակնումել, վրտաղնալ-վրտաղումել, բ'անծըրնալ-բ'անծըրժումել և այլն: Մի բանի բաշխի պատճառականը կազմվում է ծում անանցով. խրմել-խրմժումել, նրստել-նրստըրժումել, կայնիլ-կայնիլծումել, բ'անել-բ'անժումել, բ'րոնել-բ'րոնըրժումել և այլն:

Ց Բայի սեռի մասին խոսում ենք՝ հետևելով դոքտ. Ա. Ա. Արթուրյանի՝ սեռագրության, սեռերի և սեռային առումների մասին առաջինը:

Բոլոր բայերից ամանցումով պատճառական կազմել հնարավոր չէ: ներգործական բայերից քչերը կարող են ուժ ամանցն ստանալ և պատճառական դառնալ: Այս թիրիխ լրացվում է մի այլ եղանակով, այն է՝ անորոշ դերբայի վրա գրվում է ապ բայը: Այս եղանակով կարելի է պատճառական կազմել բոլոր բայերից. գ՛րելի տալ, կատարել տալ, աշխարհել տալ, քանգել տալ, շինել տալ, բ՛րանել տալ և այլն: Բայց պետք է նկատել, որ շեղբ բայերից այս ձևով կազմված պատճառականներ քիչ են գործածվում:

Տալ բայը գործածվում է նաև ամանցով պատճառական դարձած բայերի հետ. քրքրծուծել տալ, շարքծուծել տալ, մօղեծուծել տալ, մէճըծուծել տալ, պրզգրկեծուծել տալ և այլն:

Չկոք սեռը ևս ներգործականի նման չունի ձևաբանական տարբերակում: Բայի շեղբ սեռանությունը բնութագրվում է նրանով, որ առարկայի պոծոպությունը չի անցնում և չի ուղղված մի այլ առարկայի, այլ մնում է գործող, երող առարկայի սահմաններում՝ որպես նրա ինքնին գործողություն, եղելություն, գրելություն, միճակ և այլն: Չկոք սեռի բայերը չեն կարող ուղիղ խնդիր ունենալ: Չկոք սեռի բայերի օրինակներ. կայնել, նրատել, վազնել, ռաննել, պարգել, էրտալ, դ՛ալ, մքնալ, դ՛հզնել, սիվղրզել, սէվնալ, կարմրրել, կարողնալ, հիվընզնալ, սաղնալ, մեռնել, հ՛քնզնել, հ՛էննել, քիչել, հեռնալ, մօղէնալ, քուտրալ և այլն:

Կրավորական սեռի ցուցիչը՝ Վ ամանցն է: Կրավորական կարող են դառնալ ներգործական բայերը, իսկ շեղբները՝ երբեք: Կրավորական չեն դառնում նաև շեղբներից կազմված պատճառական բայերը:

Այաչկերտի խոսվածքում կրավորական բայը ցույց է տալիս, որ առարկան իր վրա է կրում գործողությունը՝ առանց ավյալ գործողությունն արտահայտող բայի ինդիքի դառնալու. մըրվել, չըրվել, քանդըվել, ավիրվել, չ՛առարվել, կօղըրվել, գ՛րբվել, կատարծվել, վառվել, ուլըվել, խըմվել, նըգարվել, ցանկել, քաղվել և այլն. քարն բնիտը շահուչօվ չ՛առարվով, էդոր տուն քու ձեռօվ ավիրվով = քարը նրա մտրճով շարզվեց, նրա տունը քո ձեռքով քանկվեց:

Թեև կրավորական սեռի իմաստը Վ ամանցով է արտահայտվում, բայց հարակատար դերբայը կարող է առանց ամանցման էլ կրավորական նշանակություն ունենալ⁹. էդ պաղ քանդուղ պ, բնիտը առղ քաղուղ ա,

⁹ Այս երևույթը հատուկ է նաև այլ բարբառների, միջին Հայերենի և արևմտահայ գրական լեզվին: Տե՛ս Ս. Բաղդասարյան-Փայաջյան, Մշո բարբառը, Երևան, 1958, էջ 116 և Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի գերբայերը և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 201—203:

քու մաղ չ՛առարուղ ա = այդ պատը քանդված է, նրա արտը հնձված է, քո մտքը շարդված է: Առացվում է, որ միևնույն բայովքը առանց ամանցման արտահայտում է կ՛ ներգործական, կ՛ կրավորական իմաստ. քանցուղ պաղ = քանդած պատ և քանդված պատ. արծուղ աղ = աղացած աղ և աղացված աղ և այլն: Սակայն պետք է նշել, որ այսպիսի գործածությունները այժմ վերացման աննզնեց ունեն. դրանք գալիս են հնից:

Հայանի է, որ դրաբարում կան բայեր, որոնք միևնույն ձևով արտահայտում են կ՛ ներգործական, կ՛ կրավորական իմաստ: Դրանք կոչվում են հասարակ բայեր: Հասարակ բայի այդ հատկությունը որոշ չափով իրեն զգալ է տալիս բարբառներում, այն էլ ո՛չ միայն հարակատար դերբայում:

Նույնիսկ պատահում է, որ բայը նույն ձևով արտահայտում է ներգործական, կրավորական և շեղբ իմաստներ, այսպես. տաշտի կատ քապե-տաշտի կախը թափվել է (չկօք), տաշտի կաթ քու մեխկով ա թապե-տաշտի կախը քո մեղքով է թափվել (կրավորական), տաշտի կատ կաղուն ա թապե-տաշտի կախը կատուն է թափել (ներգործական): Այսպիսի գործածություն ունեն է խոնարհման ներգործական բայերի մի մասը, թևպես կրավորական իմաստի արտահայտման համար գործածվում են սրանց Վ ամանցով ձևերը ևս. որոնք կատ քու մեխկով ա թապվել:

Կրավորակերպ շեղբ բայերը այնքան էլ շատ չեն: Հիշատակելի են հետևյալները. հաճապվել, հարմարվել, վառքվել և սրանց նման մի քանիսը, որոնք նորարար փոխառություններ են, ինչպես նաև զինվել, զըզվել, վոխախվել, փըռկվել, սըղալվել:

Ինչպես մասնակազմից հայերենում, այնպես էլ Այաչկերտի խոսվածքում կան բայեր, որոնք Վ ամանցն ստանալով՝ հանգերձ չեն արտահայտում կրավորական իմաստ: Դրանք միջին-անդրադարձ սեռային ստում ունեցող բայերն են: Այս բայերի գործողությունը իր վրա է կրում, իր նկատմամբ է կատարում ինքը՝ գործող առարկան, որով ստացվում է անդրադարձ նշանակություն՝ իր յուրահատկությամբ տարբեր թե՛ շեղբից, թե՛ կրավորականից. սանզըրվել, թըրաշվել, լըվածվել, կախվել, խէխարվել, պօպվել և այլն. Ավօն սանզըրվով, Աղօն լըվածվով, պաղի լուլեն կախվել պաղից:

Միջին-անդրադարձ սեռային ստումն արտահայտում է նաև երկուսի կամ շատերի միջև կատարվող փոխադարձ կամ համատեղ գործողություն. պըլուլվել, փաաըսվել, գ՛րբզբվել, խըմսըրվել, շարվել, քումվել,

բօլուկվել, բույզրվել և այլն, քամված հիւրք ցրիտու, պարար-սարք շարված պահի սադ, Հագոն ու Վանոն փատված հիւրք:

Այս բայերից մի քանիսը, նալած գործածութիւնք, կարող են անդ-բարդարծ իմաստ արտահայտել: Այդ լինում է հասակապես եղակի թիմո գործածվելու դեպքում: Այսպէս, պըլուլվալ կարբէդի մեծ (անդրա-դարձ), պըլուլվան հիւրք (փոխադարձ):

Յօդվել տողողել բայը թէև ունի Վ ամանց, բայց ներգործական սեռի է. շոր ցօղվել, աման ցօղվել և այլն: Սա միակ օրինակն է:

Կրկնասեռ բայեր են. սօվրել, փընել, իշկել, խազալ, լընալ, թըկու-ծել, խընճել, փըխել, խանճել, խօսալ, ցըրվել, օխպալ, ցալալ և այլն: Սօվրել-խոսում կարել շուտուծ աօվրե (ներգործական), ճան ու ցըրուծ սօվրեա (չեզոք):

Փընել-հօկին անջախ փընճ (ներգործական), քամին կրփըն (չե-զոք):

Իշկել-Քըթիշկել իշկճ հիվանդ էրէխին (ներգործական), անճն կիշ-կա (չեզոք):

Խազալ-Ազադն ու Համոն տամա կըխազան (ներգործական), էրէխէկ ուրանճ համա կըխազան (չեզոք):

Յըրվել բայը եռասեռ է, համարում է ներգործական, կըսվորա-կան, չեզոք սեռերի իմաստները. քամին ամբը ցըրվճ, քու մեխիօլ ընդուր ունեծուց ցըրվալ, սնարբը ցըրվալ սարի դօշի հեդ:

Կան բայեր, որոնց կրկնասեռութիւնը դըստովում է դիմային տար-բեր վերջավորութիւններ ստանալու միջոցով, որը, սակայն, երևան է գալիս անցյալ կատարյալ ժամանակում. զուլըլել-զուլլալ (չեզոք), զուլլըլէծի (ներգործական), մըրօղել-մըրօդա (չեզոք), մըրօղէծի (ներ-գործական), զալըլել-զալըլա (չեզոք), զալըլէծի (ներգործական), մա-սամը ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքում. կը զալըլ (չեզոք), կը զալըլա (ներգործ.) և ըղճական ու հարկադրական եզանակների պատանի եզակի երրորդ դեմքում:

Գ Ե Բ Բ Ա Յ Ն Ե Բ

Ալաշկերտի խոսվածքում բայն ունի վեց դերբայ. անործ, անցյալ, հարակառ, ենթակայական, ժխտական, ընթացակցական:

Անործ դերբայն ունի ել, ալ վերջավորութիւններ. խըմել, ուղել, ազալ, խազալ: Անործ դերբայը ժամանակների կազմութիւնը չի մաս-

նակցում: Կարող է գործածվել դոյականաբար, որոշիչ հոդ ստանալ և հօլովվել: Հոգնակի թիվ չունի:

Անործ դերբայի հօլովման օրինակներ

Ուղղ.	ուղել	ազալ
Տր.	ուղէլու	ազալու
Բաց.	ուղէլում, -էն	ազալում, -էն
Գործ.	ուղէլով	ազալով

Անործ դերբայը խօսքի մեջ գործածվում է որպէս.

- ա) ենթակա. աշխաղըն լալ բան ա, պարար մընալըն՝ վագր
- բ) Ստորոգիչական վերադիր. էդի աշխաղել չէ, խաղ էնիլ ա:
- գ) Որոշիչ. վարկու առդ, խըմելու չուր, հակնելու շոր:
- դ) հնդիր. էնի խոսք ա տըլն լալ գրբել:
- ե) Պարագա. վաղնէլով էգավ, մըտնելուծ փէղըմով, գընամ քաղակ սօվրելու:

Անցյալ դերբայն ունի եր, ած վերջավորութիւնները. խըմեր, քա-ղեր, ախճեր, խախճեր, խըմաճ, քաղաճ, ախճաճ, խախճաճ:

Ած վերջավորութիւնք դերբայը հայերենում հարակատար է, ցույց է տալիս այնպիսի գործողութիւն, որը կատարվել է անցյալում՝ տալով մնայուն, տեական կամ ժամանակավոր, անցողիկ հետեանք: Այս դեր-բայը խօսքի մեջ ունի ինքնուրույն գործածութիւն, կարող է գործածվել դոյականաբար, հոդ ստանալ, հոգնակիտնալ և հօլովվել: Սակայն այդ-պես չէ Ալաշկերտի խոսվածքում, որ ած (= ած) վերջավորութիւնն ունեցող դերբայը ցույց է տալիս դարձալ անցյալում կատարված գոր-ծողութիւն, բայց առանց հետեանքայնութիւն, չունի ինքնուրույն գոր-ծածութիւն, մասնակցում է վաղակատար և անց. վաղակատար ժամա-նակների կազմութիւնը միայն: Օրինակ՝ տեսաճ ա, տէսաճ էն նընա-կում են տեսել են, տեսել էին (վաղակատար և անցյալի վաղակատար) և ոչ թէ՛ տեսաճ են, տեսաճ էին:

Հայերենի հարակատար դերբային հատուկ իմաստ՝ գործողութիւն հետեանքային վիճակով, արտահայտում է ուզ վերջավորութիւնք դեր-բայը, որը և հարակատար էլ ժամանակակից հայերենի հարակատար դերբայով կազմված ընամ երեխա, հօդնամ մարդ, կոտըմաճ փայտ կա-պակցութիւնները Ալաշկերտի խոսվածքով կլինեն՝ քընուց էրէխա, նե-ղէծուց մառտ, կօզուրց փեդ, բայց ոչ երբեք՝ քընամ էրէխա և այլն: Այս օրինակներն էլ ցույց են տալիս, որ հայերենի հարակատար դերբային

Այլազերտի խոսվածքում համապատասխանում է ուզ վերջավորութ-
վանը գերբայը:

Բնաստային ու կիրառական հասկանիչները հաշվի առնելով՝ առ
վերջավորութուն ունեցող գերբայը միացնում ենք եր վերջավորութվածք
վաղակատարի հետ և երկուսը միասին անվանում անցյալ գերբայը:

Ե խոնարհման պարզ բայերի անցյալ գերբայը կազմվում է ներկայի
հիմքին եր, առ մասնիկներն ավելացնելով. գ՛րբ+եր, խըմ+եր, գ՛րբ+
ած, խըմ+ած:

Ա խոնարհման բայերի անցյալ գերբայը կազմվում է նույն մաս-
նիկներով, որոնք գրվում են անցյալի հիմքի վրա. խազած+եր=խախ-
ծեր, ազած+եր=ախծեր, խաղած+ած=խախծած, աղած+ած=ախ-
ծած: Անցյալի հիմքի և ձայնավորը անցյալ, հարակատար, ենթակայա-
կան գերբայներում, ինչպես և եղանակային ձևերի առաջին ու երկրորդ
ղեմքերում սղվում է:

Ն ածանց ունեցող բայերի անցյալ գերբայը կազմվում է անցյալի
հիմքից. ածանցը դուրս է բնկնում. վաղ+եր, ամ=վաղըր, վաղած,
հաս+եր, ամ=հասեր, հասած:

Էն ածանց ունեցող բայերի անցյալ գերբայը կազմվում է անցյալի
հիմքից: Էն ածանցի ն-ն չի պահպանվում անցյալի հիմքում, հետևա-
բար չի կարող լինել անցյալ գերբայի անցյալ հիմքից կազմվող մյուս
ձևերում. մողէծ+եր, ամ=մողէծեր, մողէծած, վախէծ+եր, ամ=վա-
խէծեր, վախէծած:

Պատճառական բայերի անցյալ գերբայը կազմվում է անցյալի հիմ-
քից. խըմծած+եր, ամ=խըմծածեր, խըմծածած, խաղծծ+եր, ամ=
խաղծծածեր, խաղծծածած:

Կրտսերական բայերի անցյալ գերբայը կազմվում է Ա խոնարհման
բայերի ներկայի հիմքից, և խոնարհման բայերի անցյալի հիմքից. խըմ-
վեր, խըմված, խախծվեր, խախծված:

Բազմապատկական բայերինը՝ ներկայի հիմքից. կըզըզեր, կոըզը-
զեր, գ՛րզգ՛րզեր:

Եղանակային ձևերի վրա առ վերջավորութուն ունեցող անցյալ գեր-
բայը գրվում է առանց փոփոխության. էլած կըսովին, նըստած կըխո-
սան, վաղած կըբտան: Այսպիսի գործածություններում անցյալ գերբայն
ունի հարադիր արժեք, այսպես. վաղած կըբտան նշանակում է վաղում
գնում են: Իսկ երբ գրվում է վաղակատար և անց. վաղակատար ժամա-
նակների վրա, ստանում է նաև սաստկացնող հավելադրության արժեք.
ավիրած սըռածած ա, սաղգած վեռածած ա, գ՛ածած հասած էն:

Եր վերջավորութուն ունեցող գերբայը նման գործածության գեղ-
քում կըրցնում է Բ-ն. նըստե կըսովին, նըստե կըխոսա Այս ձևերը ան-
որչ գերբայից կըծառված լինել չեն կարող: Համոզվելու համար կատար-
ենք հետևյալ կարգի փոփոխություններ. ա) եթե այդ կապակցություն-
ների երկու անդամներն էլ գործածենք եղանակային ձևով, կստանանք.
նըստեր ա կըսովին, նըստեր ա կըխոսա, բայց ոչ կըբեք՝ նըստել կըսովին,
կըստել կըխոսա, որպիսի գործածություններ ընդհանրապես չկան. բ) և
խոնարհման բայը փոխարինենք և խոնարհման բայով, որի ղեկարմ
անորոշ է անցյալ գերբայների շփոթությունը, Է-ն դուրս գցելու պատճա-
ռով, չի կարող լինել. գ՛ածե կըսովին, էգե կըխոսա=գնացել ստվորում
է, եկել խոսում է:

Անցյալ գերբայը, օժանդակ բայի հետ հարադրվելով, կազմում է
վաղակատար և անց. վաղակատար ժամանակներ:

Հարակատար գերբայն ունի ուզ վերջավորութուն բուր բայերի
համար. խըմուզ, ախուզ, խախուզ:

Ա խոնարհման պարզ բայերի հարակատար գերբայը կազմվում է
ներկայի հիմքից, որի վրա գրվում է ուզ մասնիկը. գ՛րբ+ուզ, քաղ+ուզ,
խըմ+ուզ:

Ա խոնարհման պարզ բայերի հարակատար գերբայը կազմվում է
անցյալի հիմքից, աղած+ուզ=ախծուզ, խաղած+ուզ=խախծուզ:

Ն ածանց ունեցող բայերի հարակատար գերբայը կազմվում է անց-
յալի հիմքից. ախ+ուզ=ախուզ, հաս+ուզ=հասուզ: Այստեղ էլ ն
ածանցը դուրս է բնկնում:

Էն ածանց ունեցող բայերի հարակատար գերբայը կազմվում է
անցյալի հիմքից. մողէծ+ուզ=մողէծուզ, վախէծ+ուզ=վախէծուզ:

Կրտսերական բայերի հարակատար գերբայը կազմվում է և խո-
նարհման բայերի ներկայի հիմքից, և խոնարհման բայերի անցյալի
հիմքից. գ՛րբուզ, մըբուզ, քաղուզ, ախըբուզ, կոտըբուզ:

Պատճառական բայերից, ածանցման միջոցով, հարակատար գեր-
բայ կազմել չի կարելի:

Բազմապատկական բայերի հարակատար գերբայը կազմվում է ներ-
կայի հիմքից. կըզըզուզ, կոըզըզուզ, գ՛րզգ՛րզուզ:

Հարակատար գերբայը ժամանակների կազմությանը չի մասնակ-
ցում: Հարակատար գերբայի գործածությունը որպես որոշել լայն տա-
րածում ունի. ախուզ ազ, չ՛առուզ փէղ, վառուզ թուխո:

Հարակատար գերբայը կարող է գործածվել գոյականաբար, հոգ
ստանալ և հորովվել:

Հարակատար գերբայի հուղման օրինակ

եզակի

հոգնակի

Ուղղ. շարույ	շարույներ
Տբ. շարույի	շարույներու
Բաց. շարույէն, իծ	շարույներէն, ուծ
Գործ. շարուցով	շարուցներով

Հարակատար գերբայը դոյականաբար հանդես գալու զեպքում նախադասութեան մեջ լինում է.

- ա) ենթակա. շարույն բ'ըլավ:
- բ) Հատկացուցիչ. շարույի կէտն քանդէծին:
- գ) Ենդիր. Պէղրոս զըզեծ Պօղօսի ծուռ շարույզն:
- դ) Պարագա. շարույի վրէն էի քար զ'ըրին:
- ե) Ստորգնչիական վերադիր. պաղըն շարույ ա:
- զ) Բացահայտիչ կարող է լինել այն զեպքում, երբ դրա գործածութեանը հնարավոր է անձ կամ որևէ շնազվոր ցույց տվող բացահայտյալի հետ. կրօն' էզ մեռուզըն, աշխատանքի շրջածն:
- է) ենթակայական գերբայն ունի օղ վերջավորութեան թե՛ ն խոնարհման, թե՛ ա խոնարհման բայերի համար. խրմօղ, քաղօղ, ախծօղ, խախծօղ:

Ն խոնարհման պարզ բայերի ենթակայական գերբայը կազմվում է ներկայի հիմքից. գ'ըր+օղ, քաղ+օղ, խրմ+օղ:

Ա խոնարհման պարզ բայերի ենթակայական գերբայը կազմվում է անցյալի հիմքից. ազած+օղ=ախծօղ, խաղած+օղ=խախծօղ, կառտած+օղ=կառտածօղ:

Ն անանց ունեցող բայերի ենթակայական գերբայը կազմվում է ներկայի հիմքից. վազեօղ, տէսնօղ, հասնօղ:

Էն անանց ունեցողների ենթակայական գերբայը՝ անցյալի հիմքից. մօղէծօղ, վախէծօղ:

Պատճառական բայերի ենթակայական գերբայը՝ անցյալի հիմքից. խախծուծօղ, մօղէծուծօղ, հասուծօղ:

Կրավորական բայերի ենթակայական գերբայը կազմվում է ներկայի հիմքից և խոնարհման բայերի համար. գ'ըրվօղ, քաղվօղ, և անցյալի հիմքից՝ ա խոնարհման բայերի համար. կառտրծվօղ, ախծրվօղ:

Բազմապատկական բայերի ենթակայական գերբայը՝ ներկայի հիմքից. կըզըռօղ, կօզըռօղ, գ'ըզզ'ըզօղ:

Գերբայնեք	գերբայ. վերջով.	Պարզ և անանցավոր բայերի գերբայական ձևերը				
		պարզ	սուկածանցավոր	պատճառական	բազմապատկական	կրավորական
Անօրոջ	ել, ալ	կօզրել, խաղալ	վազնել, մօղէնալ	կօզրել տալ, խախծուծել, վազըռուծել, մօղէծուծել	կօզըռօղ. վազվըզել	կօզըրվել խախծըվել
Անցյալ	եր, ած	կօզրեր, խախծեր կօզրած, խախծած	վազեր, մօղէծեր վաղած, մօղէծած	կօզրել տվեր, խախծուծեր, վազըռուծեր, մօղէծուծեր, կօզրել աքված, խախծուծած վազըռուծած, մօղէծուծած	կօզըռօղեր. վազվըզեր կօզըռօղած, վազվըզած	կօզըրվեր կօզըրված
Հարակատար	ուչ	կօզրուչ, խախծուչ	վազուչ, մօղէծուչ	կօզրել աքվուչ, խաղալ աքվուչ, վազնել աքվուչ, մօղէնալ աքվուչ	կօզըռօղուչ. վազվըզուչ	կօզըրվուչ
ենթակայական	օղ	կօզրօղ, խախծօղ	վազնօղ, մօղէծօղ	կօզրել աքվօղ, խախծուծօղ, վազըռուծօղ, մօղէծուծօղ	կօզըռօղօղ. վազվըզօղ	կօզըրվօղ խախծըվօղ
Էնթացակցական	օվ, էն	կօզրէլէն, խաղալէն կօզրելով, խաղալով	վազնէլէն, մօղէնալէն վազնելով, մօղէնալով	կօզրել տալէն, խախծուծելէն, վազըռուծելէն, մօղէծուծելէն, կօզրել աքվով, խախծուծելով, մօղէծուծելով, վազըռուծելով	կօզըռօղէլէն. վազվըզէլէն	կօզըրվէլէն
Ժխտական	ի, է, ա	կօզրի (է), խաղա	վազնի (է), մօղէնա	կօզրել տա, խախծու, վազըռու, մօղէծու	կօզըռօղի (է), վազվըզի	կօզըրվի (է) խախծըվի (է)

Ծանոթութիւն. — Ետղալ կրկնասեռ բայը կրավորական շունի ընցնանքապես: Ներքոր՝ ծական իմ առաջ գործածվելիս նարբար են աւորոշ, ենթակայական և ժբխտական գերբայներ ձևերը. խախծըվել, խախծըվօղ, խախծըվի:

Ենթակայական դերբայը ժամանակների կազմութեանը չի մասնակցում: Նախադասութեան մեջ լինում է սրտչիչ. կառքածող մատու, խօսող էրէխա, լրձօղ ճի:

Ենթակայական դերբայը կարող է գործածվել գոյականաբար, հոգ ստանալ և հոլովվել:

Հոլովման օրինակ

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	գ'ըրօղ	գ'ըրօղներ
Տբ.	գ'ըրօղի	գ'ըրօղներու
Բաց.	գ'ըրօղիժ, էն	գ'ըրօղներժ, էն
Գործ.	գ'ըրօղօղ	գ'ըրօղներօղ

Գոյականաբար գործածվելիս ենթակայական դերբայը նախադասութեան մեջ լինում է.

- ա) Ենթակա. լավ աշխատող շաղ պաղիվ կունենա:
- բ) Ստորոգելիական վերադիր. գ'ու գ'ըրօղ իս, էնի կառքածող ա:
- գ) Խնդիր. սօվրօղներուն գ'իրկ տըվին:
- դ) Պարագա. Թամբըլծօղի մօղ շընորկ շըկա:
- ե) Հատկացուցիչ. խաղ բսօղի ճ'են բ'անծըր կեղնի:

Փխտական դերբայն ունի ի, է, ա վերջավորութիւնները:

Ե խոնարհման բայերի վերջավորութիւններն են ի, է, գ'ըրի, բ'էրի, քաղի, գ'ըրէ, բ'էրէ, քաղէ:

Ա խոնարհմանը՝ ա. խաղա, աղա, կատա:

Ե խոնարհման բայերի ներկա ժամանակի ժխտական ձևերում հանդես է գալիս ի վերջավորութեամբ ժխտական գերբայը, իսկ անցյալի անկատարի ձևերում՝ է վերջավորութեամբ գերբայը:

Ներկա

Անցյալի անկատար

ըմ գ'ըրի	ընկ գ'ըրի	ընկ գ'ըրէ	ընկ ք'ըրէ
ըս գ'ըրի	ըսի գ'ըրի	ըսր գ'ըրէ	ըսի գ'ըրէ
ըբ գ'ըրա	ընն գ'ըրի	ըսր գ'ըրէ	ընն գ'ըրէ

Ինչպես երևում է օրինակից, Ե խոնարհման ներգործական բայերի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքում կա ա վերջավորութիւն: Բոլոր դեպքերում ի վերջավորութիւն ունեն շեղօք բայերը. ըմ վազնի, ըս վազնի, ըբ վազնի և այլն: Այս երևույթը խոսում է այն մասին,

որ ե խոնարհման բայերի ժխտական դերբայի ձևավորումը զենուս լրիվ շահով չի ավարտվել:

Ժխտական դերբայը, ինչպես հայտնի է, առաջացել է անորոշից, որի լ-ն ընկել է, իսկ ե խոնարհման բայերի ե-ն վերածվել է ի-ի¹⁰: Այս իմաստով էլ է, ի, և ձայնավորները վերջավորություն պիտի համարել պայմանականորեն:

Բոլոր պարզ և ե, ևն անաց ունեցող բայերի ժխտական դերբայը կազմվում է ներկայի հիմքից, քաղի, աղա, աէսնի, մօղէնա:

Ի խոնարհման կրավորական բայերի ժխտական դերբայը կազմվում է ներկայի հիմքից, քաղվի, գըրվի, իսկ և խոնարհմանը՝ անցյալի հիմքից, կառործվի, աղծրվի:

Պատճառական բայերի ժխտական դերբայը ներկայացնում է անցյալի հիմքը՝ առանց ում անանցի ց-ի, կառարծու, վազզծու, նքարծու, կանքծու: Ժխտական դերբայի աշտիտի կազմություն այլ բարբառներում դիտված չէ:

Ժխտական դերբայը միշտ գործածվում է օժանդակ բայի ժխտական ձևերի հետ և մասնակցում է ժամանակների կազմությանը: Ինքնուրույն գործածություն չունի:

Ընթացակցական դերբայն առաջացել է անորոշի բացառական և գործիական հոլովներից և ունի այդ հոլովների էն, օվ վերջավորությունները. բաշէլէն, քաշէլօվ, վաղնէլէն, վաղնէլօվ, քէլէլէն, քէլէլօվ, խօսալէն, խօսալօվ և այլն:

Ընթացակցական դերբայ կարող է կազմվել նաև ման, մանծ մասնիկներով, բայց ոչ բոլոր բայերից. կանքման (կանքմանծ), վազման, լեռման, երօտրմանծ: Ման, մանծ մասնիկները զրկում են ներկայի հիմքի վրա:

Ընթացակցական դերբայը ժամանակների կազմությանը չի մասնակցում, նախադասության մեջ գործածվում է որպես ձևի պարագա. քէլէլօվ գընած, վազման էգալ, խօսալէն կրկարա:

Ամփոփելով դերբայների մասին ասվածը, անհնում ենք, որ անորոշ դերբայի ել, ալ մասնիկները համապատասխանում են գրաբարի անորոշ դերբայի նույն մասնիկներին:

Անցյալ դերբայի եր վերջավորությունը գրաբարյան եալ-ի հետագա ձևափոխությունն է: Ան վերջավորությամբ դերբայն ունի անցյալի

¹⁰ ՏՃՄ Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 237 և հետո:

(վաղակատար) իմաստ, որ հատուկ է միայն Ալաշկերտի խոսվածքին.

Ընթացակցական դերբայի օվ վերջավորությունը պահպանվել է նույնությամբ: Հարակատար, ընթացակցական, ժխտական դերբայները հետագա գոյացություններ են և անմիջականորեն չեն կազմում գրաբարի հետ:

Հետ իրենց կիրառությունների, դերբայները բաժանվում են երկու խմբի.

ա) Դերբայներ, որոնք ունեն միայն ձևաբանական արժեք, հանգես են դալիս դիմավոր ձևերում (կազմում են ժամանակներ) և չունեն ինքնուրույն գործածություն: Դրանք են՝ անցյալ և ժխտական դերբայները:

բ) Միայն շարահյուսական արժեք ունեցող դերբայներ՝ անորոշ, հարակատար, ենթակայական, ընթացակցական, որոնք նախադասության զանազան անդամների պաշտոններ են կատարում, գործածվում են գոյականաբար (բացի ընթացակցականից): Չեն մասնակցում բայական ժամանակների կազմելուն:

Դերբայները ներկայացնում ենք մի տախտակով՝ տալով վերջավորություններն ու դերբայական ձևերը բոտ պարզ և անանցավոր բայերի:

Ե Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ

ԲԱՅԵՐԻ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԶՄԵՐԵՐԸ

Բայի դերբայական և նշանակալիս ձևերը կազմվում են երկու հիմքից՝ ներկայի և անցյալի:

Ներկայի հիմքն ստանալու համար անորոշ դերբայից հանում ենք ել, ալ վերջավորությունները: Պարզ բայերի ներկայի հիմքը համընկնում է բայարմատին: Օրինակ՝ քէլէլ-քէլ, կարել-կար, խաղալ-խաղ, խօսալ-խօս և այլն:

Անանցավոր բայերի ներկայի հիմքում բայարմատին միանում են անանցները. հասնել-հասն, մօղէնալ-մօղէն, թըռնել-թրոն, զարմանալ-զարման, խամընալ-խամըն, կօղըրվել-կօղըրվ, չարտողել-չարտող և այլն:

Բարդ կամ անանցավոր բառերից կազմված բայերի ներկայի հիմքը զարծյալ ստացվում է դերբայական մասնիկները հետացնելու միջոցով. սկվափօրել-սկվափօր, լուսօլիալ-լուսօլի, համօվնալ-համօվն, անտէրել-անտէրն, ձէլնճընել-ձէլնճըն, որչորել-որչոր և այլն:

Անցյալի հիմքը լինում է պարզ և բաղադրյալ-ցոյական: Պարզ հիմք-

քը նույնն է բայարմատի հետ: Բազադրյալ հիմքում բայարմատին ափ-
լանում են եծ, ամ բազադրիչները: Անշեշտ վանկում եծ բազադրիչի ե-ն
հնչյունափոխվում է է-ի, իսկ ամ-ի ա-ն սղվում է կամ վերածվում ք-ի:

Ե խոնարհման բոլոր բայերը պարզ հիմք ունեն. վազնել-վազ, մըզ-
նել-մըզ, հասնել-հաս, կայնել-կայն, նքստել-նքստ և այլն:

Ե խոնարհման պարզ բայերի ներկայի և անցյալի հիմքերի միջև ոչ
մի տարբերություն չկա, իսկ և ածանց ունեցողների տարբերությունն
այն է, որ ածանցը անցյալի հիմքում չի պահպանվում: Անցյալ կատար-
յալ մասնակցում և խոնարհման պարզ ներգործական բայերը հանդես
են գալիս և՛ պարզ, և՛ բազադրյալ-ցոյական հիմքով. գ՛րբել-գ՛րբ, գ՛րբեծ,
քաշել-քաշ, քաշեծ, հանել-հան, հանեծ, բ՛լբել-բ՛լբ, բ՛լբեծ, կոզրել-
կոզր, կոզրեծ, փրչրել-փրչր, փրչրեծ և այլն:

Ա խոնարհման պարզ բայերի անցյալի հիմքը բազադրյալ է. կա-
տալ-կատաած, խազալ-խազած, աղալ-աղած և այլն:

Ա խոնարհման և և կն ածանց ունեցող բայերի անցյալի հիմքում
ածանցի ե-ն վերածվում է ձ-ի, ունէնալ-ունէծ, մօզէնալ-մօզէծ, վախէ-
նալ-վախեծ, հէռէնալ-հէռէծ, բ՛տոնալ-բ՛տոծ, գ՛տոնալ-գ՛տոծ, բ՛անծըր-
նալ-բ՛անծըրծ և այլն:

Կրավորական բայերը, եթե կազմվում են Ե խոնարհման բայերից,
ներկայի հիմքի հետ ունեն նաև Վ ածանցը. գ՛րվել-գ՛րվ, տարվել-
տարվ, թապվել-թապվ, առվվել-առվվ, կրղրվել-կրղրվ և այլն, իսկ
եթե կազմվում են ա խոնարհման բայերից, Վ ածանցը դնում են անց-
յալի հիմքի վրա. կատարվել-կատարծվ, խախծրվել-խախծրվ, ախծրվել-
ախծրվ և այլն: Ա խոնարհման բայերը կրավորական դառնալիս վերած-
վում են Ե խոնարհման:

Ա խոնարհման և՛ պարզ, և՛ ածանցավոր բայերից կազմված պատ-
ճառականներն ունեն բազադրյալ-ցոյական հիմք, կատալ-կատարծում,
խազալ-խախծում, բլրլրալ-բլրլրծում, ցավալ-ցավծում և՛ քարքնալ-
քարքծում, ամճընալ-ամճըծում, փկընալ-փկըծում և այլն:

Ե խոնարհման շեղոք սեռի պարզ և ածանցավոր բայերից կազմված
պատճառականներն ունեն ոչ ցոյական հիմք (կազմված բայարմատից և
պատճառական ածանցից), հասնել-հասում, բ՛լբել-բ՛լբում, հակնել-հա-
կում, թրոնել-թրոնում, կրքնել-կրքում, մթոնել-մթոնում և այլն:

Ե խոնարհման ներգործական բայերից ածանցումով պատճառական
չի կազմվում: Բացառություն են կազմում խրմել-խրմծումել, ուղել-
կերծումել, հակնել-հակումել բայերը:

Բազմապատկական բայերի անցյալի հիմքը ունի նույն կազմույթու-
նը, ինչ և խոնարհման բայերինը:

Ե Ո Ն Ա Ր Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

Ակաշկերտի խոսվածքն ունի երկու լծորդություն՝ էլ, ալ: Ել լծորդու-
թյան (կամ Ե խոնարհման) պատկանում են այն բայերը, որոնք անորոշ
դերբաում ունեն ել վերջավորություն (և խոնարհիչ): գ՛րբել, տանել,
բ՛րբել, հասնել, վէրծել, բ՛րոնել, ուղել, խրմել, ջ՛տտել, փրչրել, կոզ-
րել, մըզնել, հ՛իճնել, հ՛լչնել, վազնել, նքստել, կայնել, վախել, ցանել,
քաղել, աշխաղել, սովբել, կրքել և այլն:

Ալ լծորդության (ա խոնարհման) բայերը նրանք են, որոնք անո-
րոշ դերբաում ունի ալ վերջավորություն (ա խոնարհիչ). կատալ, խազալ,
տեսնալ, աղալ, դարմանալ, մօզէնալ, հեռէնալ, բ՛տոնբրնալ, ցածրնալ,
գ՛իմանալ, բ՛տոնալ, դ՛տոնալ, գ՛ալ, էրտալ, էրկվալ, րօտալ, բրոտալ,
բ՛տնալ, լրվալ և այլն: Գրաբարյան իլ լծորդության բայերն անցել են
իլ լծորդության, միայն մի քանիսը՝ ալ լծորդության, ինչպես՝ զղոխիլ >
զրզվալ, խօլորիլ > խօլրոնալ, ծարափիլ > ծարափնալ, ժիժաղիլ > ժիժաղալ,
կաթիլ > կատալ, ցավիլ > ցատալ:

Ալ լծորդության բայերը անցել են էլ, մի մասն էլ՝ ալ լծորդու-
թյաններին. ստնուլ > ստնել, թորուլ > թողել, կրղնուլ > հ՛ւտարվալ,
լնուլ > լրնալ, ցածնուլ > ցածրնալ, պշնուլ > պշրալ և այլն, շատերն էլ
գործածական չեն. գիլուլ, բրիեռնուլ, զենուլ, շրտնուլ, կիզուլ, խնուլ և
այլն:

Կան բայեր էլ, որ ալ լծորդության են անցել ել-ից. արածել > առ-
ձալ, տեսանել > աէտնալ, ճանաչել > ճանճրնալ, ամաչել > ամճրնալ,
ածել > ածալ, հաչել > հաճալ և այլն:

ՕՑԱՆՈՒԿ ՐԱՅ

Օժանդակ բայն ունի ներկայի և անցյալի ձևեր:

Ներկայի ձևեր		Անցյալի ձևեր	
իմ	ինկ	էնկ	էնկ
իս	իկ	էր	էկ
ա	ա	էր	էն

Ներկայի եզակի և հոգնակի երբորդ դեմքում որպես օժանդակ բայ հանդես է գալիս ա ձայնավորը: Մյուս դեմքերը ներկայացնում են եւ բայի ձևափոխությունները՝ Ե-ն վերածվել է ի ձայնավորի, իսկ հոգնակի թվի Բ-ն, համաձայն բաղաձայնական համակարգում տեղի ունեցած փոփոխությունների, դարձել է կ: Հոգնակի թվի առաջին դեմքում մ-ի դիմաց կա և. եմք > էնկ:

Անցյալի ձևերի եզակի թվի երկրորդ և երրորդ դեմքերի համար գործածվում է երրորդ դեմքի Լ՛ր ձևը, իսկ եզակի թվի առաջին դեմքի համար գործածվում է հոգնակի թվի Լեկ ձևը: Յժանդակ բայի ներկայի Լեմ, էմ, եմ ձևերը անդել են անցյալի Կաբ, էիբ, էին ձևերի տեղը:

Օժանդակ բայի ժխտականը հետևելու տեսքն ունի.

Ներկա		անցյալ	
չլւմ	չընկ	չընկ	չընկ
չլս	չըկ	չըր	չըկ
չը	չըն	չըր	չըն

Չ ժխտականի հավելումով օժանդակ բայի ի, է, ա ձայնավորները հնչյունափոխվում են ր-ի, որա հետևանքով հոգնակի թվում ներկայի և անցյալի ձևերը նույնանում են:

Օժանդակ բայը դերբայի հետ կազմում է բաղադրյալ ժամանակներ:

Օժանդակ բայի դրական ձևերը սովորաբար գրվում են դերբայից հետո, իսկ ժխտականները՝ դերբայից առաջ: Տրամաբանական շեշտի դիրքից կախված՝ օժանդակ բայի դրական ձևերը կարող են գրվել նաև դերբայից առաջ. ճ՛օւնն ա հալի, հողն ա շորժե, կանանճն ա հ՛էլե և այլն:

Եմ բայի ձևերը գործածվում են նաև որպես էական բայ. էնի էր, դ՛ու իս, մառտ ա Այս դեպքում ներկայի երրորդ դեմքը լինում է ոչ թև ա, այլ ին՛ մառտ ին (— մարդ են):

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿԱՆ ԵՎ ՓԵՄԱՆԱԿԱՆԵՐԸ

Այլադիտի խոսվածքում բայն ունի շորս եղանակ՝ սահմանական, հրամայական, ըզձական, հարկադրական:

Սահմանական եղանակ

Սահմանական եղանակի ժամանակներն են՝ ներկա, անցյալի անկատար, անցյալ կատարյալ, վաղակատար, անց, վաղակատար:

Ներկա ժամանակը կազմվում է կբ եղանակիչի մասնակցությունամբ հետևելու կերպ՝

ա) Ե խոնարհման պարզ ներգործական բայերի ներկայի հիմքին ավելանում են իմ, իս, ա, ինկ, իկ, ին դիմային վերջավորությունները.

եզակի	հոգնակի
կբբաղիմ	կբբաղինկ
կբբաղիս	կբբաղիկ
կբբաղա	կբբաղին

Ներգործականների նման է խոնարհվում էլվել շեղոք սեփ բայը:

բ) Չեղոք բայերի ներկա ժամանակը կազմվում է նույն ձևով, միայն եզակի թվի երրորդ դեմքի վերջավորությունը ա-ի փոխարեն լինում է ի.

եզակի	հոգնակի
կընքստիմ	կընքստինկ
կընքստիս	կընքստիկ
կընքստի	կընքստին

գ) Ա խոնարհման բոլոր բայերը, անկախ սեռային տարբերություններից և կազմությունից, ներկա ժամանակում ստանում են ամ, աս, ա, անկ, ակ, աճ վերջավորությունները:

Ներգործական	Չեղոք		
եզակի	հոգնակի	եզակի	հոգնակի
կաղամ	կաղանկ	կէբէվամ	կէբէվանկ ¹¹
կաղաս	կաղակ	կէբէվաս	կէբէվակ
կաղա	կաղան	կէբէվա	կէբէվան

Անցյալի անկատար ժամանակը ևս կազմվում է կբ եղանակիչով, ներկայի հիմքով և դիմային վերջավորություններով: Անցյալի անկատար

¹¹ Տարբեր առաջ ձևերները հոգնակի առաջին դեմքը գործածում էին նաև առաջ Ե-ի՝ մեկ դիմակ, կուգիկ, կըբապ:

րի վերջավորութուններն են. Լնկ, էր, էր, Լնկ, Լկ, Լն, որոնք ընդհանօր են բե՛ և, բե՛ ա խոնարհումների բայերի համար:

Ե խոնարհում

Ա խոնարհում

եզակի	հոգնակի	եզակի	հոգնակի
կըքաղէնկ	կըքաղէնկ	կաղէնկ	կաղէնկ
կըքաղէր	կըքաղէի	կաղէր	կաղէի
կըքաղէր	կըքաղէն	կաղէր	կաղէն

Կը եղանակիչը ձայնավորով սկսվող բայից առաջ կորցնում է իր Բ բաղադրիչը. կազամ, կուրխնամ, կուղիմ, կըսիմ, կենիմ և այլն:
 Հ՝ով և մի խումբ ձայնավորով սկսվող բայերից առաջ կը եզանակիչը վերածվում է գ-ի, իսկ Ե՛-ն զուրս է ընկնում:

Ներկա

Անցյալի անկատար

գուզիմ	գուզինկ	գուզէնկ	գուզէնի
գուզիս	գուզիկ	գուզէր	գուզէի
գուզա	գուզին	գուզէր	գուզէն

Գայ, լալ բայերի հետ ևս զործածվում է գ եղանակիչը, բայց ի ձայնավորի հավելումով. Գիգ՛ամ, գ՛իգ՛աս... գիլամ, գիլաս և այլն (նան՝ գ՛իկամ, գ՛իկաս):

Տալ բայի մոտ եղանակիչը հանդես է գալիս կի՛ ձևով. կիղամ, կիղաս, կիղա... կիղենկ, կիղէր և այլն:

Սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները, բացի իրենց հիմնական իմաստից, արտահայտում են նաև սահմանական ապանի և անցյալի ապանի ժամանակների իմաստ, ինչպես և զործածվում են որպես պարմանական (ենթադրական) ապանի և անցյալի ապանի. Այապես.

Սարոն կէրտա օար=Սարոն գնում է սար (սահմանական ներկա), Սարոն գնալու է սար (սահմանական ապանի), Սարոն կգնա օար (պայմանական ապանի):

Սարոն կէրտէր օար=Սարոն գնում էր սար (սահմանական անցյալի անկատար), Սարոն գնալու էր սար (սահմանական անցյալի ապանի), Սարոն կգնար օար (պայմանական անցյալի ապանի):

Անցյալ կատարյալ ժամանակը կազմվում է անցյալի հիմքից, որին ավելանում են դիմային հետևյալ վերջավորությունները.

ա) Յ խոնարհման ներդրմական բայերին՝ ի, իր, ինկ, իկ, ին: Այս բայերը անցյալ կատարյալում, բացի եզակի թվի երրորդ դեմքից, կրկնակն են՝ կազմված պարզ և բաղադրյալ հիմքով.

եզակի		հոգնակի	
քաղի	քաղէժի	քաղինկ	քաղէժինկ
քաղիր	քաղէժիր	քաղիկ	քաղէժիկ
քաղեժ		քաղին	քաղէժին

բ) Ն խոնարհման շեղք բայերին ավելանում են ա, աբ, ալ, աճկ, ալ, աճ կըքաղվորութունները.

եզակի	հոգնակի
նըստա	նըստանկ
նըստար	նըստակ
նըստալ	նըստան

Չնդրքների նման է խոնարհվում սովորել կրկնաեսն բայը:

Չ) Ն խոնարհման մի խումբ բայեր անցյալ կատարյալ ժամանակում ստանում են և՛ ներդրմական, և՛ շեղք բայերին հատուկ վերջավորություններ: Այդ բայերն են՝ դալըլել-դալըլէժի, դալըլա, ամիրել, ամիրէժի, ամիրա, բըղզօրել-բըղզօրէժի, բըղզօրա, դաղիլ-դաղիլէժի, դաղա, կըլորել-կըլորէժի, կըլորա, թապիլ-թապիլէժի, թապա, կօղրել-կօղրէժի, կօղրա, ջ՛ստալել-ջ՛ստալէժի, ջ՛ստաա, մուղըլել-մուղըլլէժի, մուղըլա, կուլըլել-կուլըլէժի, կուլըլա, գ՛րջօրել-գ՛րջօրէժի, գ՛րջօրա, թանակօղել-թանակօղէժի, թանակօղա, հալիլ-հալիլէժի, հալա, մըրօղել-մըրօղէժի, մըրօղա, մըլիօղել-մըլիօղէժի, մըլիօղա, ճէնջօղել-ճէնջօղէժի, ճէնջօղա, թօօղել-թօօղէժի, թօօղա և սրանց նման՝ օլ անցնց ունեցող ամականներից կազմված բայերը՝ քիչ բացառությամբ, ինչպես նաև այն բազմապատկական բայերը, որոնք ամանցումով կազմվում են նշված բայերից. թալըրղիլ, կօղըրղիլ, ջ՛ստաբղղիլ և այլն:

Ճոնարհման օրինակ

եզակի		հոգնակի	
հալէժի	հալա	հալէժինկ	հալանկ
հալէժիր	հալար	հալէժիկ	հալակ
հալէժ	հալամ	հալէժին	հալան

Ներգործական բաշերի վերջավորութիւններ ստանալու ղեկարմ արտահայտում են ներգործական, իսկ չեզոք վերջավորութիւններ ստանալիս՝ չեզոք կամ անդրադարձ սեռի իմաստ. գ՛րլօրէժի=գլորեցի, գ՛րլօրա=գլորվեցի: Սակօս մէզ հաղ մեծ քար գ՛րլօրէժ=Սարոն մի մեծ քար գլորեց. քարըն գ՛րլօրազ=քարը գլորվեց:

Այս բայերը ներկա ժամանակի եզակի երրորդ ղեմքում են կարող են ստանալ երկու տեսակ վերջավորութիւն՝ ա, ի: Ա վերջավորութիւն ստանալիս ներգործական իմաստ են արտահայտում, իսկ ի ստանալիս՝ չեզոք. կը գ՛րլօրա=գլորում է, կը գ՛րլօրի=գլորվում է: Այսպես է նաև բղձական եզանակի ապստի երրորդ ղեմքում՝ գ՛րլօրա=գլորի, գլորի=գլորվի, և հարկադրական ապստի երրորդ ղեմքում՝ բըզի գ՛րլօրա=պիտի գլորի, բըզի գ՛րլօրի=պիտի գլորվի:

դ) Ա խոնարհման ներգործական բաշերը ստանում են ա, ար, ալ, անկ, ալ, ան վերջավորութիւնները: Եզակի երրորդ ղեմքը գործածվում է նաև առանց վերջավորութիւն. այս ղեկարմ 3-րդ ղեմքը համընկնում է անցյալի հիմքին.

եզակի	հոգնակի
ախծա	ախծանկ
ախծար	ախծակ
ախծալ (աղած)	ախծան

ե) Ա խոնարհման չեզոք սեռի պարզ բայերը, որոնք գերազանցապես բնածայնական կամ նժանաձայնական բառեր են, ստանում են և խոնարհման ներգործական բաշերին հասուկ վերջավորութիւններ, առանց դրօշաբերու չեզոք լինելուց: Այսպես են նաև մի քանի ոչ բնածայնական բաշեր. էրէվալ, հապալ, մըխալ, լօղալ, լըծալ, նըքշալ, թօպլալ, փիլալ, սըլալ, սօղալ:

եզակի	Հոգնակի
հըվճըվածի	հըվճըվածինկ
հըվճըվածիք	հըվճըվածիկ
հըվճըված	հըվճըվածին

Ներգործական սեռի բաշերից մի քանիսը են այսպես են խոնարհվում, դրանք են. լըվալ-լըվածի, խըղշալ-խըղշածի, օցօրմալ-օցօրմածի: Ինչպես և՛ կրկնատես խօսալ, լընալ, օխալալ, ցափալ բաշերը: Լընալ «լընել» բայը և խոնարհման ներգործական բաշերի նման

եզակի երրորդ ղեմքում ունենում է և՛ վերջավորութիւն (լըծեժ), իսկ մյուս բոլոր գեղեցերում՝ կրկնակի ձևեր. լըծի-լըծէժի, լըծիր-լըծէժի և այլն:

Վաղակատար ժամանակը կազմվում է անցյալ դերբայով և ժանգակ բաշի ներկայի ձևերով: Հոգնակի թվի երրորդ ղեմքում հանդես է գալիս դերբայի ան վերջավորութիւնը տարբերակը, իսկ եզակի թվում է հոգնակի թվի առաջին ու երկրորդ ղեմքերում՝ եր վերջավորութիւնը տարբերակը: Կազմութիւն այս եղանակը ընդհանուր է և, ա խոնարհումների բոլոր բաշերի համար.

	եզակի		հոգնակի	
քաղեր իմ	ախծեր իմ	քաղեր ինկ	ախծեր ինկ	
քաղեր իս	ախծեր իս	քաղեր իկ	ախծեր իկ	
քաղեր ա	ախծեր ա	քաղած ա	ախծած ա	

Եզակի երրորդ ղեմքը խոսքի մեջ կարող է գործածվել նաև առանց ժանգակ բաշի՝ Կարօն ցօրեն քաղև, ախծե պըռձև:

Անց. վաղակատար ժամանակը կազմվում է անցյալ դերբայով և ժանգակ բաշի անցյալի ձևերով: Այստեղ ևս հոգնակի թվի երրորդ ղեմքը կազմվում է անցյալ դերբայի ան վերջավորութիւնը տարբերակով:

Այս նույն ձևով է կազմվում բոլոր բաշերի անց. վաղակատար ժամանակը.

	եզակի		հոգնակի	
քաղեր էնկ	ախծեր էնկ	քաղեր էնկ	ախծեր էնկ	
քաղեր էր	ախծեր էր	քաղեր էկ	ախծեր էկ	
քաղեր էր	ախծեր էր	քաղած էն	ախծած էն	

Երբ խոսքի մեջ գործածվելիս վաղակատար և անց. վաղակատար ժամանակների ժանգակ բաշը դերբայից առաջ է դրվում, դերբայի վերջավորութիւնն ր ձայնորդը ընկնում է, զու լավ իս գրքն, էնի շուգ և վարն, Սըրկէն վարիժ շուգ էր պըռձև: Այսպես է նաև Երեանի, Կարոն, Մշո, Արզվիների բարբառներում:

Հրամայական եղանակ

Ունի միայն երկրորդ ղեմք, եզակի և հոգնակի թիվ: Ե խոնարհման ներգործական սեռի բաշերի հրամայական եզակի

թվում ունի օ, հոգնակի թվում՝ Էկ վերջավորությունները՝ քաղա՛, քաղէ՛կ: Չեզոք բայերը եզակիում ունեն ի, հոգնակիում՝ Էկ վերջավորությունները՝ նրսա՛ի, նրսա՛է՛կ, կայնի՛, կայնէ՛կ:

Անկանոն է բ՛էրեւ բայի հրամայականի եղակին՝ բ՛եր:

Ա խոնարհման բայերը նույն վերջավորություններն ունեն, ինչ է խոնարհման բայերը, բայց բոտ սեռի հակառակ դասավորությամբ:

Ներգործական բայերի եզակին ունի ի վերջավորություն, իսկ շեզոք բայերի եզակին՝ օ: Հոգնակի թվում Էկ վերջավորությունը ընդհանուր է.

ախծի՛, ախծէ՛կ, էրվա՛, էրվա՛է՛կ

Ս խոնարհման պարզ բայերի հրամայականը (թե՛ եզակին, թե՛ հոգնակին) կազմվում է ներկայի հիմքից, օ խոնարհման բայերինը՝ անցյալի հիմքից (Ա խոնարհման շեզոք բայերի եզակին՝ ներկայի հիմքից՝ էրվա՛, փիւլ՛, նընջա՛):

Նյութի թվում գործածական են նաև և խոնարհման բայերի ներկայի հիմքից կազմված ձևերը՝ ախծի-ազա, խախծի-խազա, կառածի-կառա և այլն:

Նրկորոզ ձևերի գործածությունը սահմանափակ է և արդյունք՝ գրական լեզվի ազդեցությամբ:

Ըղձական եզանակ

Ըղձական եզանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալի ապառնի, որոնք կազմվում են վերջավորություններով համապատասխանաբար նման են սահմանական եզանակի ներկա և անցյալի անկատար ժամանակներին: Տարբերությունը կայանում է նրանում, որ ըղձական եզանակի ժամանակները կը եղանակել չունեն: Ս խոնարհման շեզոք բայերը խոնարհվում են ներգործականների նման, միայն եղակի երրորդ դեմքում ա-ի փոխարեն ունեն ի վերջավորություն (ներգործ. քաղա, շեզոք՝ նրսաի), իսկ օ խոնարհման ներգործական և շեզոք բայերի խոնարհման մեջ ոչ մի տարբերություն չկա:

Ե խոնարհում

Ապառնի

քաղիմ	քաղինկ
քաղիս	քաղիկ
քաղա	քաղին

Անց. ապառնի

քաղէնկ	քաղէնկ
քաղէր	քաղէկ
քաղէր	քաղէն

Ա խոնարհում

աղամ	աղանկ	աղէնկ	աղէնկ
աղաս	աղակ	աղէր	աղէկ
աղա	աղան	աղէր	աղէն

Հարկադրական եզանակ

Հարկադրական եզանակը կազմվում է ըղձական եզանակից՝ բայից առաջ գրվող բըղի եզանակիչի օգնությամբ: Ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալի ապառնի:

Ապառնի

Ե խոնարհում

եզակի	հոգնակի
բըղի քաղիմ	բըղի քաղինկ
բըղի քաղիս	բըղի քաղիկ
բըղի քաղա	բըղի քաղին

Ա խոնարհում

եզակի	հոգնակի
բըղի աղամ	բըղի աղանկ
բըղի աղաս	բըղի աղակ
բըղի աղա	բըղի աղան

Անցյալի ապառնի

բըղի քաղէնկ	բըղի քաղէնկ	բըղի աղէնկ	բըղի աղէնկ
բըղի քաղէր	բըղի քաղէկ	բըղի աղէր	բըղի աղէկ
բըղի քաղէր	բըղի քաղէն	բըղի աղէր	բըղի աղէն

Պարզ բայերի խոնարհման հարազույց

Ե խոնարհում

Ներգործական բայի՝ քաղել (= Նձնկ), շեզոք բայի՝ նրստել:

Ներկա

եզակի	հոգնակի	եզակի	հոգնակի
կըքաղիմ	կըքաղինկ	կըքաղէնկ	կըքաղէնկ
կըքաղիս	կըքաղիկ	կըքաղէր	կըքաղէկ
կըքաղա	կըքաղին	կըքաղէր	կըքաղէն

Չեզոք. եզ. 3-րդ. ի՛ կը նըստի¹²:

¹² Տայն ենք շեզոք բայերի միայն այն ձևերը, որոնք տարբերվում են ներգործականներից:

Անցյալ կատարյալ

քաղի,	քաղէծի	քաղինկ,	քաղէծինկ	նրստա	նրստանկ
քաղիբ,	քաղէծիբ	քաղիկ,	քաղէծիկ	նրստար	նրստակ
քաղեծ	քաղինք,	քաղէծինք		նրստալ	նրստանք

Վաղակատար

քաղեր իմ	քաղեր ինկ	քաղեր էնկ	քաղեր էնկ
քաղեր իս	քաղեր իկ	քաղեր էր	քաղեր էկ
քաղեր ա	քաղած ա	քաղեր էր	քաղած էն

Հրամայական եղանակ

քաղան	քաղէկ	նրստի	նրստէկ
-------	-------	-------	--------

Բղձական եղանակ

Ապտոնի

քաղիմ	քաղինկ	քաղէնկ	քաղէնկ
քաղիս	քաղիկ	քաղէր	քաղէկ
քաղա	քաղին	քաղէր	քաղէնք

Չեղորք. եզ. 3-րդ. ի՛ նրստի:

Հարկադրական եղանակ

Ապտոնի

բըղի քաղիմ	բըղի քաղինկ	բըղի քաղէնկ	բըղի քաղէնկ
բըղի քաղիս	բըղի քաղիկ	բըղի քաղէր	բըղի քաղէկ
բըղի քաղա	բըղի քաղին	բըղի քաղէր	բըղի քաղէնք

Չեղորք. եզ. 3-րդ դ. ի՛ բըղի նրստի:

Ա խոնարհում

Ներդրթական թայ՝ ազալ, չեղորք թայ՝ էրէվալ:

Ներկա

Անցյալի անկատար

կաղամ	կաղանկ	կաղէնկ	կաղէնկ
կաղաս	կաղակ	կաղէր	կաղէկ
կաղա	կաղան	կաղէր	կաղէնք

Անցյալ կատարյալ

ախծա	ախծանկ	էրէվածի	էրէվածինկ
ախծար	ախծակ	էրէվածիբ	էրէվածիկ
ախծալ(աղած)	ախծան	էրէված	էրէվածինք

Վաղակատար

ախծեր իմ	ախծեր ինկ	ախծեր էնկ	ախծեր էնկ
ախծեր իս	ախծեր իկ	ախծեր էր	ախծեր էկ
ախծեր ա	ախծած ա	ախծեր էր	ախծած էն

Հրամայական եղանակ

ախծի	ախծէկ	էրէվան	էրէվածէկ
------	-------	--------	----------

Բղձական եղանակ

Ապտոնի

աղամ	աղանկ	աղէնկ	աղէնկ
աղաս	աղակ	աղէր	աղէկ
աղա	աղան	աղէր	աղէնք

Հարկադրական եղանակ

Ապտոնի

բըղի աղամ	բըղի աղանկ	բըղի աղէնկ	բըղի աղէնկ
բըղի աղաս	բըղի աղակ	բըղի աղէր	բըղի աղէկ
բըղի աղա	բըղի աղան	բըղի աղէր	բըղի աղէնք

ԱՅԱՆՏԱՅՎՈՐ ԲԱՅՆԵՐԻ ԽՈՆԱՐԿՈՒՄԸ

Ն հիմնածանց ունեցող Ե խոնարհման բայերը խոնարհվում են Ե խոնարհման շեղորք բայերի նման: Մահմանական եղանակի ներկա, անցյալի անկատար ժամանակներում և բղձական ու հարկադրական եղանակներում և ածանցը պահպանվում է, իսկ մյուս ժամանակներում և հրամայական եղանակում դուրս է բնկնում:

Ն ածանց ունեցող ա խոնարհման բայերը անցյալի հիմքում և ածանցը փոխաբերվում են ծ-ով և խոնարհվում են ալնպես, ինչպես ա խոնարհման ներդրթական սեռի պարզ բայերը: Ածանցավոր բայերը խոնարհվում են ստորև տրված ձևով:

Անճալի անկարգ

Ներքա

հզակի	հոգնակի	հզակի	հոգնակի
կը հասնիմ	կը հասնինկ	կուժօյնամ	կուժօյնանկ
կը հասնիս	կը հասնիկ	կուժօյնաս	կուժօյնակ
կը հասնի	կը հասնին	կուժօյնա	կուժօյնան

Անցյալի անկարգ

կը հասնէնկ	կը հասնէնկ	կուժօյնէնկ	կուժօյնէնկ
կը հասնէր	կը հասնէկ	կուժօյնէր	կուժօյնէկ
կը հասնէր	կը հասնէն	կուժօյնէր	կուժօյնէն

Անցյալ կատարյալ

հասա	հասանկ	ուժօյնամ	ուժօյնանկ
հասար	հասակ	ուժօյնար	ուժօյնակ
հասա՛մ	հասան	ուժօյնամ	ուժօյնան

Վաղակատար

հասեր իմ	հասեր ինկ	ուժօյնար իմ	ուժօյնար ինկ
հասեր իս	հասեր իկ	ուժօյնար իս	ուժօյնար իկ
հասեր ա	հասած ա	ուժօյնար ա	ուժօյնած ա

Անցյալի վաղակատար

հասեր էնկ	հասեր էնկ	ուժօյնար էնկ	ուժօյնար էնկ
հասեր էր	հասեր էկ	ուժօյնար էր	ուժօյնար էկ
հասեր էր	հասած էն	ուժօյնար էր	ուժօյնած էն

Հրամայական եղանակ

հասի՛	հասէ՛կ	ուժօյնի՛	ուժօյնէ՛կ
-------	--------	----------	-----------

Բղնական եղանակ

Ապառնի

հասնիմ	հասնինկ	ուժօյնամ	ուժօյնանկ
հասնիս	հասնիկ	ուժօյնաս	ուժօյնակ
հասնի	հասնին	ուժօյնա	ուժօյնան

Անցյալի ապառնի

հասնէնկ	հասնէնկ	ուժօյնէնկ	ուժօյնէնկ
հասնէր	հասնէկ	ուժօյնէր	ուժօյնէկ
հասնէր	հասնէն	ուժօյնէր	ուժօյնէն

Հարկադրական եղանակ

Ապառնի

բըլի հասնիմ	բըլի հասնինկ	բըլի ուժօյնամ	բըլի ուժօյնանկ
բըլի հասնիս	բըլի հասնիկ	բըլի ուժօյնաս	բըլի ուժօյնակ
բըլի հասնի	բըլի հասնին	բըլի ուժօյնա	բըլի ուժօյնան

Անցյալի ապառնի

բըլի հասնէնկ	բըլի հասնէնկ	բըլի ուժօյնէնկ	բըլի ուժօյնէնկ
բըլի հասնէր	բըլի հասնէկ	բըլի ուժօյնէր	բըլի ուժօյնէկ
բըլի հասնէր	բըլի հասնէն	բըլի ուժօյնէր	բըլի ուժօյնէն

Ա խոնարհման Ան անանց ունեցող բայերը խոնարհվում են և անանց ունեցողների նման: Ածանցի է ձայնավորը պահպանվում է ամենուրեք, իսկ ն ձայնորդը անցյալի հիմքում և նրանից կազմված ժամանակներում փոխարինվում է ձ-ով:

Ե խոնարհման այն բայերը, որոնք կորցրել են շ ածանցը և վերածվել են պարզ բայերի, խոնարհվում են անանցավոր բայերի նման. ներկա՝ հուռիմ, վաղակատար՝ ուռի իմ, հրամայական՝ ուռի՛ և այլն:

Պատճառական բայերը ներկա ժամանակում կորցնում են ածանցի ձ-ն և տառնում մ, ս,—նկ, կ, և վերջավորությունները: Ըղձական եղանակի պատճառից կազմվում է ներկայի նման: Հրամայական եղանակի եզակին բայի հիմքն է՝ առանց ձ-ի: Մյուս բոլոր եղանակներում ու ժամանակներում պատճառական բայերը խոնարհվում են և խոնարհման պարզ ներգործական բայերի նման:

Պատճառական բայերի նման են խոնարհվում խրատիկ, թրկուծիկ, հատածիկ բայերը, որոնք ունեն պատճառական ածանց, բայց չունեն իրենց ածանցազուրկ սկզբնատիպերը և այդ պատճառով գիտակցվում են որպես պարզ: Պատճառական իմաստ չունի բ՛րանըծուծիկ բայը, քնդեա կա նրա ածանցազուրկ բ՛րանի սկզբնատիպը: Այսպես է նաև գրական Շայրիկում գործածվող բնանցիկ բայը: Տայ բայով կազմված

